

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ո.Շ. ԱԲՐՈՀԱՄՅԱՆ

**ՀԱՄԱՌՈՏ ՈՒԹՎԱԳԻՇ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԱԼԵՈԳՐԱՖԻԱՅԻ**

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՑԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока

49199-72

Ա-16

Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Ապրիլի 1 1961 թ.

ՀԱՄԱԼՈՏ ՈՒՐՎԱԳԻՇ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱԼԵՈԳՐԱՖԻԱՅԻ

Դաստիարակության կարդացված Յերեվանի
պետական համալսարանի պատմական
ֆակուլտետի V մասնագիտական կուրսում



A 13189

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պալեոգրաֆիա բառը — հունարեն և և նշանակում է հնագրություն (πολαιός = հին և ցրածա = գրում եմ): Առարկայի նպատակն եւ ուսումնասիրել՝ գրության առաջացումը, ձեափոխումը, տարածումը, ինչպես և այն ամենը, ինչ վոր. կապվում է նշված հարցերի հետ — գրելու նյութը, գրելու ժամանակը, ձեռագրի գրիչները, և այլն: Հայկական պալեոգրաֆիայի ներկա համառոտ կուրսը նպատակ է դնում ծանոթացնել հայկական գրության առաջացման, ձեափոխման և տարածման հետ: Նա սովորեցնում է նաև՝ թե ինչպես պիտի վորոշել ուսումնասիրության յենթակա տեքստի ժամանակն ու վավերականությունը:

Հայկական պալեոգրաֆիայի նշանակությունը հայ ժողովը պատմության և գրականության համար բավականաչափ մեծ է: Նա համարվում է հայ ժողովրդի պատմության և գրականության ոժանդակ կարեոր դիսցիպլինաներից մեկը: Հին և միջնադարյան հայոց պատմությամբ և գրականությամբ զբաղվող մասնագետներն իրենց ուսումնասիրության սկզբնաղբյուրներն, ինչպես հայտնի յեն, ձեռագիր և վիճակիր տեքստերն են դարձնում: Հայկական պալեոգրաֆիայի հիմնական որենքներին անծանօթ անձնավորությունը, պարզ եւ, վոր չի կարող ոգտվել այդ բնագրերից:

Պալեոգրաֆիայի նշանակությունը հայ ժողովրդի պատմության և գրականության ուսումնասիրության ասպարեզում մեծ և նաև մի ալ հարցում: — Մեղ հասած հայկական գրչագիր և վիճակիր տեքստերի զգալի մասը չունեն թվականներ: Գրող, ընդուրինակող և փորագրող անձինք հաճախ չեն գրում թվականը կամ գրում են, բայց հետազայում թվական պարունակող այդ մասը փչանում, կորչում եւ: Պալեոգրաֆիան և գարձյալ, վոր մեղ ոգնության և գալիս՝ վորոշելու տվյալ տեքստի մոտավոր ժամանակը:

Յեվ, վերջապես, մեզ հասած գրչագիր և վեմագիր տեքստեւ րում հաճախ պատահում են գրության ժամանակի անճշտություններ: Յերբեմն, որինակ՝ կեղծում են ձեռագրի գրելու ժամանակը: Կամ պատահում ե՝ ուշ շրջանում ընդորինակող գրիչներն արտագրում են նախագաղափար որինակի հիշատակարանը նախկին ժամանակով, վորը և պատճառ և դառնում վորոշ շփոթությունների: Այս բոլոր դեպքում պալեոգրաֆիան մեզ սովորեցնում ե ճիշտ ձևով մոտենալ ուսումնամիբության յնթակա տեքստին և ճիշտ ձևով վորոշել նրա ժամանակը և վավերականությունը:

Հայկական պալեոգրաֆիայի շարադրված ամբողջական կուրս մինչև այժմ, դժբախտաբար, գոյություն չունի: Սակայն նրա թեմաներից մեծ մասը, վորոշ դեպքում շատ մանրամասը, մշակված և մեր մատենագրության մեջ:

Գրչության արվեստին վերաբերող առանձին հոդվածների մենք հանդիպում ենք գեռուս Մովսես Քերթողին, Դավիթ Անհաղթին և Ստեփաննոս Սյունեցուն վերագրվող Դիոնիսիոս Թրակիացու քերականության մեկնությունների մեջ, Նման հատվածներ կան նաև Համամ Արեգիցու (IX դ.), Գրիգոր Մագիստրոսի (XI դ.), Հովհաննես Յերզնկացու (XIII դ.), Վարդանի (XIII դ.) և այլ հեղինակների կազմած քերականությունների կամ քերականության մեկնությունների մեջ:

Միջին դարերում առանձին հայ մատենագրեր կազմել կամ մեկնել են հայկական գրչության ամբողջական կուրսեր: Այդպիսի հայ հեղինակներից կարելի յե հիշել Արիստակես Գրչին (XIII դ.), վորի աշխատությունը վերնագրված ե. «Վերլուծութիւնք բացերեապես բազմազան բառից և բայից յովնախումք շարադրությամբ արարեալ զա Արիստակէսի գրչի ի խնդրոյ բազմաց յարհեսատզգրչութեան» (տես մեր մատենագրարանի թիվ 3917 ձեռագիրը), Գրիգոր Սկեվուեցուն կամ Լամբրոնացուն (XIII դ.), վորի աշխատությունը վերնագրված ե. «Խրատք գրչութեան, զոր արարեալ է Գէորգ վարդապետ՝ ի խնդրոյ Ստեփաննոսի մականուն Գոյներիցանց Կայթառանցւոյ» (տես մեր մատենագրարանի թիվ 267 ձեռագիրը) և Գրիգոր Տաթևացուն (XV դ.), վորի աշխատության վերնագիրն ե «Գրիգոր Տաթևացոյ լուծումն դժուարիմաց բանիցն ի գիր գրչութեան Արիստակէսի և Գէորգայ Լամբրոնացւոյ» (տես մեր մատենագրարանի թիվ 7117 ձեռագիրը):

Հիմք կա յննթագրելու, վոր հայկական գրչության արվեստի վորոշ կուրսեր դասավանդվել են միջնադարյան հայոց գրպ-

ըոցներում։ Մեր մատենադարանի մի գրչագիր (XIV դարի), վորը պարունակում ե Գեվորգի և Սրբածակեսի կազմած գրչության արվեստի կուրսերը, ունի հետևյալ հիշատակարանը. «Զի որպէս անհնար է թոշնոց ի լուծ լծել և ակօս պատառել և կամ եղանց յօդս վերանալ, նոյնպես առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծի գրչութեան և որ յանդկնի համարձակիր՝ ոչ կարէ գրել ճշմարիտն, այլ զեղծանէ զարուեստն և աղաւաղէ գրելին ըստ անիմաստ խոհակիրի, այսինքն՝ մսագործի, որ ոչ զիտէ զորոշումն յօդուածին, այլ անհմտաբար հանէ զանդամ այն միւն ի միւս անդամն և զմիւսոյն ի միւս» (տես թիվ 237 ձեռագիրը, Ստեփաննոս գրչի հիշատակարանը):

Հայկական պալեոգրաֆիային վերաբերող առանձին հարցեր և թեմաներ ժամանակակից գիտական պահանջների համաձայն սկսվել ե մշակվել XIX դ. յիշկրորդ կեսում։ 1892 թ. Խահակ Հարությունյանը մշակել ե հայոց նշանագրերի ստեղծման և հայկական գրության տեսակների վերաբերյալ իր արժեքագոր աշխատությունը «Հայոց գիրը» վերնագրով՝ 1898 թ. Վիեննայի միաբանության անդամ Հակոբոս Տաշյանը՝ յեվրոպացի գիտական Շուխարդի (H. Schuchardt) հայկական պալեոգրաֆիայի վորոշ հարցերի նկատմամբ արված հարցումների կապակցությամբ, մշակել ե հրատարակել ե իր արժեքագոր աշխատությունը «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» վերնագրով՝ ծանրանալով հայկական պալեոգրաֆիայի մի շարք հարցերի վրա—գրության տեսակների, սրանց գործադրված ժամանակի, կրկնագրերի, բառատրոնության, կետագրության և այլն։ Հայկական պալեոգրաֆիայի մըշակման ասպարեզում անգնահատելի աշխատանք ե կատարել պրոֆ. Հ. Աճառյանը։ Նա իր մի շարք հոդվածներում, վորոնք լույս են տեսել «Հանդէս ամսօրիայ»-ում, մանրամասը մշակել ե հայկական գրության նախնական տեսակները, ծածկագրությունը, «իմաստնոց նշանագիր»-ը և պալեոգրաֆիային վերաբերող բազմաթիվ այլ հարցեր։ Հայկական պալեոգրաֆիայի համար արժեքագոր աշխատություններ են հանդիսանում՝ Մարկվարտի «Պատմություն հայերեն նշանագրերու» ուսումնական գրությունը, վերջերս Արմֆանի Պատմության և Արինեղովի ինստիտուտի հրատարակած ընկ. կ. Ղաֆաղարյանի «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատությունը և բազմաթիվ այլ աշխատություններ, վորոնք մեծ չափով ոգնել են մեզ պալեոգրաֆիայի ներկա համառոտ կուրսի կազմման ժամանակ։

- Պալեոգրաֆիայի մեջ մտնում են հետևյալ 15 թեմաները՝
- 1) Նախամեսրոպյան գրի ու գրականության հարցը,
 - 2) Հայկական գրության հնագույն նմուշները,
 - 3) Հայ գրիչները,
 - 4) Հայկական գրերի տեսակավորումը,
 - 5) Յերկաթագիրը և նրա բնորոշ հատկանիշները,
 - 6) Բոլորգիրը,
 - 7) Նոտր գիրը և շղագիրը,
 - 8) Համառոտագրությունները,
 - 9) Գաղափարագրերը,
 - 10) Ծածկագրության հիմնական տեսակները,
 - 11) Թվերի գործածությունը հայկական գրականության մեջ,
 - 12) Կետադրությունը,
 - 13) Մանրանկարչությունը,
 - 14) Տեքստերում կատարված աղավաղումները և փոփոխությունները,
 - 15) Զեռագրերի սիդնատուրայի լրացումը:

Պալեոգրաֆիայի կուրսի մեջ մտնող մի շարք թեմաներ մենք բաց ենք թողնում, վորովինեակ նրանք այնքան մանրամասն են մշակված, վոր այժմ մեր խորհրդային համալսարաններում առանձին ոժանդակ կուրսեր են դառնել Այդ թեմաներից են՝ Յամիզմատիկան (վորն ուսումնասիրում և հնագույն գրամների և մեղաների գրությունները), սիրազիսիկան (վորն ուսումնասիրում և հին կոնիքների գրությունները), դիպլոմատիկան (վորն ուսումնասիրում և հին կոնդակների, ակտերի և այլ վավերագրերի գրությունները) և եղիցրաֆիկան (վորն ուսումնասիրում և վիմագիր արձանագրությունները):

1. ՆԱԽԱՄԵՍՐՈՒԹՅԱՆ ԳՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հայ ժողովրդի կուլտուրայի և գրականության պատմության մութ և վիճելի հարցերից մեկը—նախամեսրոպյան գրի և գրականության գոյության հարցն եւ Խոսքն այստեղ սեպագիր գրության մասին չե, վորը, ինչպես հայտնի յե, գործ են ածել Հայաստանի նախարարիկները և վորով գրված մոտ 110 արձանագրություններ են հասել մեզ, այլ մեր ներկա հայերեն գրությանը նախորդող գրի ու գրականության։ Հայագետ գիտնականներն այդ գրության վերաբերյալ հայտնել են իրարից բավականին տարբեր կարծիքներ։

Մինչև XIX դ. յերկրորդ կեսը նախամեսրոպայան գրի և գրականության գոյության փաստն ընդհանրապես ժխտվել և Գերիշխող և հանդիսացել այն տեսակետը, վոր նախ քան Մեսրոպը հայկական գիր ու գրականություն չի յեղել, Մեսրոպն եր, վոր առաջին անգամ ստեղծեց հայկական նշանագրերը (բացառությամբ յերկուսի, վորոնք հետագայում ավելացվեցին): Մեր պատմագրության մեջ այդ տեսակետի հիմնագիր կարելի յե համարել Զամշյանին: Նա իր «Հայոց պատմութեան» առաջին հատորում գրել է. «Յայտ է առ ամեննախին, թէ զնշանագիրս հայոց՝ զոր վարեմք, եղիտ սուրբն Մեսրոպ ընդ ամենայն՝ երեսուն և կեց տառք՝ յայրէն մինչև ի քէ, ի բաց առեալ զօն և դֆէն, որք ի յետին ժամանակս առեալ եղէն յայոց ազգաց» (Մ. Զամշեան, Պատմութիւն հայոց, հատ. I, եջ 755):

Հայկական գրչության վերաբերյալ գերիշխող այդ տեսակետն առաջին անգամ քննադատության և յենթարկվել ինձինակի կողմից: Նա իր «Հնախօսութեան» մեջ փորձել է ապացուցել, վոր Վուաճապուհ հայոց թագավորի հրամանով Դանիելի մոտից Հայաստան բերված գրերը վհչ թէ Դանիելի կողմից եյին ստեղծված, այլ հին հայկական գործածական գրերն եյին, վորոնք պահվել եյին նրա մոտ. «Դանիելեան գիրս... ոչ եթե Դանիելի է յօրենեալ, այլ առ նմին Դանիելի պահեալք էին հայկական նշանագիրք...» (Ղ. Ինձինեան, Հնախօսութիւն 1, եջ 73):

Նախամեսրոպայան նշանագրերի գոյության հարցն ավելի համարձակ դնում է պրոֆ. Բ. Պատկանյանը: Նրա համոզմամբ «...ավելի ճիշտ և այն կարծիքը, վորի համեմատ Մեսրոպը վոչ թե դատավ հայոց այրուբենը, այլ արդեն յեղած, բայց ընդհանուրից չգործադրված Դանիելյան հայկական այրուբենը կատարելագործեց» (Проф. Патканов, տես նրա թարգմանած „История Мовсеса Каганкатваци“ ծանոթագրությունները, եջ 326):

Նման վճռական յեղրակացությունների յեն հանգել նաև յեղրակացի հայագետներ Հյուրշմանը, Գետերմանը և ակադ. Բըռուսեն: Այսպես, Պետերմանը նախամեսրոպայան նշանագրերի մասին հետևյալն է գրում. «Հայոց տառերի գյուտը վերագրում են Մեսրոպին, սակայն նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր նա վհչ թե ամբողջ այրուբենն ե գրել կամ կազմել, այլ մի հին, վաղուց մոռացված այրուբենը վերականգնել, կատարելագործել և տարածել և ամբողջ յերկրում» (H. Petermann, Real-Encyklopädie für protestantische Theologie. I, եջ 666):

Ակադեմիկոս Բրոսսեն վոչ միայն համոզված ե յեղել նախամեսառոպյան շրջանում հայկական նշանագրերի գոյության հարցում, այլև փորձել ե վորոշել նրանց քանակը. «Հայոց հին այբուբենը բաղկացած եր 22 տառեց, վորի վրա Մեսրոպն ավելացրեց 14 տառ, այդպիսով կազմվեց նոր այբուբենն ըստ հունական շարահարության» (Brosset, Deux Historiens Arméniens Kirakos de Ganzac, 13-րդ ծանոթությունը):

Նախամեսրոպյան հայկական գրականության գոյության հարցն ամենից ավելի համարձակ դրել ե ակադեմիկոս Վ. Բրյուսովը: Նա ուսւերեն լեզվով իր կազմած „Լետոպիս исторических судеб армянского народа“ աշխատության մեջ մանրածառը քննելով այն բոլոր փաստերը, վորոնք վկայում են հոգուտ հայկական գրականության նախամեսրոպյան շրջանում գոյության, յեղել ե հետեւյալ վճռական յեղբակացության: «Առաջին չորս դարերի ընթացքում հայկական գրերի մի մասը շարադրված ե յեղել այլ լեզվի այբուբենով, իսկ մյուս մասը՝ Դանիելյան գրերով» (В. Брюсов, Летопись... № 47-48):

Հոգուտ նախամեսրոպյան հայ գրականության գոյության ե արտահայտվել նաև հայագիտության խոշոր ու հեղինակավոր դեմքերից մեկը—Ն. Յ. Մառը: Նա իր նշանավոր «ԱՀԱ»աշխատության առաջաբանում, քննելով Անդրկովկասի կուլտուրայի պատմության մի շարք հարցեր հայկական գրականության վերաբերյալ, յեկել ե հետեւյալ յեղբակացության: «Վողջ Կովկասը, ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական են յեղել դեռևս ասորաբարելական քաղաքակրթության եպոխայում: Հայաստանում մայրենի լեզվով գրականություն գոյություն ուներ մեր թվագրությունից դեռևս մի քանի դար առաջ» (Н. Յ. Марр, ԱՀԱ, 1934, էտր. 5):

Հայկական գրականությունը նախ քան Մեսրոպը և ընդհանրապես քրիստոնեությունից առաջ գոյություն ունենալու հարցը դնող գիտնականները նշում են հետեւյալ փաստերը՝

ա) Մեսրոպյան գրությանը նախորդող շրջանից մեզ հասել են մի շարք հայ մատենագիրների աշխատությունները (Փավստոս, Ագաթանգեղոս (իհարկե վոչ մեզ հասած խմբագրությամբ) և ուրիշները, վորոնք, հավանական ե, գրվել են հայերեն, բայց այլ նշանագրերով:

բ) V դարից առաջ Հայաստանում գոյություն ուներ կազմակերպված պետականություն: Այդքան հին պետականություն

ունեցող յերկրում չեր կարող գոյություն չունենալ տեղական լեզվով գրականություն։ Այդ անհրաժեշտ եր հատկապես ներքին հարաբերության համար։

գ) Հին հայ պատմիչները հիշում են առանձին հայ թագավորների քարտուղարների։ Այդպիսի քարտուղարներից մեկն եր Ագաթանգեղոսը Տրգատ մեծի պալատում։ Այդ բարտուղարները, հավանական ե, գրում ելին վնչ միայն հունարեն և ասորերեն, այլև տեղական լեզվով։

դ) V դարից առաջ, ըստ Խորենացու և Փավստոսի տեղեկությունների, Հայաստանում գոյություն ե ունեցել դատավարություն (Փալմտոս, IV, 12, Խորենացի, III, 51)։ Այդ դատավարությունը, հավանական ե, վարչել ե տեղական լեզվով։

ե) Հեթանոսական Հայաստանում գտնվում ելին մեծ թգով մեհյաններ, ուր քուրմերը ժամապաշտություն ելին կատարում։ Դժվար թե այդ ժամապաշտությունը կատարվեր այլ լեզվով։ Հավանական ե, նրանք ունելին տեղական լեզվով գրված ծիսակատարության մատյաններ, և վնչ թե մտեն ինչ քուրմերը գիտելին անգիր՝ ձեռվ։

զ) Խորենացին վկայում ե, վոր պարս Շապուհ թագավորի հրամանով նրա զորավարներից Մերուժանը մտել ե Հայաստան, այրել ե ձեռքն ընկած զրքերը և արգելել ե հունարենից գըրքերի թարգմանությունը («Եւ զորս միանդամ զիրս գտանէր՝ այրեր, և հրաման տայլ մի ուսանել զգպրութիւն յունարէն, այլ զգպարսիկ, և մի ոք իշխանություն խօսել կամ թարգմանել այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենելին մի լիցի Հայոց ընդ յունաց ծանօթութիւն»—Խորենացի, III, 36)։ Յեթե Շապուհի ժամանակ Հայաստանում գոյություն ե ունեցել թարգմանություն՝ պարզ ե, վոր գոյություն ե ունեցել նաև հայ գրություն։

է) V դարից մեզ հասած կանոնական-կրոնական և փիլիսոփայական թարգմանական գրականությունն աչքի յե ընկնում իր ճշտությամբ և հարուստ վոճով։ Աստվածաշունչի թարգմանությունն, որինակ, ըստ մի շարք յեվրոպացի գիտականների վկայության, հանդիսանում ե բոլոր թարգմանությունների թագուհին։ Այդպիսի ճշտությամբ և գրական հարուստ վոճով թարգմանությունը հնարավոր եր միայն այն ժողովրդի մոտ, վորն ուներ գրական հարուստ լեզու և թարգմանական վորոշ արագիցիս։

ը) Հեթանոսական շրջանում Հայաստանում պաշտվել ե մի

աստված, վորի անունը յեղել և Տիր (այդ նույն անունից ե տիրացու): Սա համարվել ե արվեստի և գրականության աստվածը: Մի ժողովուրդ, վոր ունեցել ե գրականության և արվեստի աստված, նա ունեցել ե նաև գրականություն:

թ) Յեփ, վերջապես, Փիլիստրատոսը (հույն հեղինակ, վորն ապրել ե III դ. առաջին կեսում) Ապպողոնիոս Տիւանցոյ վարքի մեջ բերում ե մի զրույց այն մասին, վոր Տավրոսում մի վագր ե բռնվել, վկին մի մանյակ և մանյակի վրա հայերեն գրած «Թագաւոր Արշակ Նիւսեայ» (էպէչրառտօ Արմենոս որպատճառ Վասիլես Արծուհի Ֆեփ Նուսիփ – II, 2 տար. C. L. Kayser, հատ. I, եջ 44): Վագրի զրույցը կարող ե առասպել լինել, բայց վոր III դարի հեղինակը ծանոթ պիտի յեղած լինի հայերեն գրության գոյության փաստի հետ—դա կասկածից դուրս ե:

Նախամեսրոպյան շրջանում հայ գրի ու գրականության գոյությունը չնդունող աղբյուրագետները մատնացույց են անում հետեւյալ փաստերը՝

ա) Կան մատենագրական պարզ վկայություններ նախամեսրոպյան գրականության բացակայության: Այսպես, Կորյունի մոտ կարդում ենք. «Զի ոչ էր գիր հայերէն լիզուի» բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն առ աշակերտեալն»—Կորյուն, եջ 16):

թ) Հունարեն լեզվով են գրված Հայաստանի մեջ գտնվող հայ թագավորների հին արձանագրությունները: Այդպիսի արձանագրություններից ե՝ Տրդատ հայոց թագավորի արձանագրությունը Բաշ-Արարանում (տես Ռոստովցև «Ապարանская греческая надпись царя Тирдата»), Արմավիրի արձանագրությունը՝ գրված Սելեվկյան շրջանում, Սերեսոսի տեղեկությունը թե՝ «զըրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և պարթեաց յունարէն դպրութեամբ» և այլն:

դ) Արշակունի թագավորների մեջ հասած դրամները հունարեն գրով են կտրած (տես Sammlung Petrowicz, Arsaciden-Münzen, Wien 1904, s. 183–191, Tafel XXV):

Մեր կարծիքով ավելի հավանական ե յերեսում առաջին գիտականների յինթագրությունները, վորովհետեւ նախամեսրոպյան գրականության գոյությունը չնդունող գիտնականների բերած փաստարկումները վերաբերում են հայկական նշանագրերի բացայության և պաշտոնական շրջաններում հունարեն գրության գործածության, Հայկական վորոշ պատմիչներ, յերեսում ե, վոր

Նրանք աշխատում են հայկական գիրն ու գրականությունը, ինչպես և վողջ հայկական կուլտուրան, կապել քրիստոնեության հետ: Յեթէ նախամեսրոպյան շրջանում յեղել ե հայկական գրականություն, իսկ մեզ թվում ե, վոր հարցի նման դրվածքը ճիշտ ե, ապա պիտի յենթադրել վոր քրիստոնեական կրոնը, յերբ ճանաչվեց վորպես պաշտոնական կրոն Հայաստանում, վոչ սիայն քանդեց և վոչնչացրեց մեհյանները, այլև վոչնչացրեց նրանց ստեղծած վողջ գրականությունը:

Հայկական ներկա գրությունը կապվում ե Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: Ժամանակակից պատմիչները (Կորյուն, Ղազար Փարտիկի և Մովսես Խորենացի) մանրամասն նկարագրում են հայկական ներկա գրերի ստեղծման պատմությունը. կուլտուրական այդ խոշոր փաստը նրանք պատմում են հետեւյալ ձեռով: — Մեսրոպ Մաշտոցը դիմում ե Սահակ կաթողիկոսին՝ սեփական գրեր ստեղծելու համար: Վերջինս հավանություն ե տալիս Մաշտոցի յանկությանը և յերկուսով միասին դիմում են Վուածապուհ հայոց թագավորին: Վուածապուհը հայտնում ե նրանց, վոր իրեն հայտնի յե վոմն Դասիել ասորի յեպիսկոպոսի մոտ հայերեն նշանագրերունենալու փաստը: Մարդ են ուղարկում Դասիելի մոտ և բերում հայոց նշանագրերը: Պարզվում ե, վոր հայոց այրութենը թերի յե, — պակասում են ձայնավոր տառերը: Մաշտոցը Վուածապուհի թագավորելու հինգերորդ տարին մի խումբ աշակերտների հետ իջնում ե Յեղեսիա և Ամիդ՝ հայկական նշանագրեր ստեղծելու ցանկությամբ: Աշակերտներին թողնելով այդ քաղաքներում, Մաշտոցը յերկու հոգու հետ միասին գնում ե Մոպսունստա քաղաքը՝ հայկական գրի վերաբերյալ թեոդոս Մոպսունստացուցուց խորհուրդներ ստանալու համար: Այստեղ ել հենց վերջնականապես կազմվում ե հայկական մեր ներկա այրութենը: «Այսպես—պատմում ե Կորյունը—բազում աշխատութեան համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: որում և պարզէր իսկ վիճակ յամենաշնորհն աստուծոյ, հայրական չափուն ծնանել ծնունդ նորոգ և սքանչելիս սուրբ աջոմն իւրով նշանագերս հայերէն լեզուին: Եւ անդէն վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ յօրինէր սիւզոբայիւք և կապօք և ձայնատուր նշանօք»:

Նշանագրերի այդ ստեղծումը, ըստ նորագույն ուսումնասիրությունների, տեղի յե ունեցել 407 թվին:

Մաշտոցը Մոպսունստից գնում ե Սամոսատ քաղաքը՝ հայ-

կական տառերը գեղագրական մշակման յինթարկելու համար՝ չեւ ապա, — շարունակում ե կորյունը, — հրաժարեալ եպիսկոպոսացն սրբոց հանդերձ օգնականօք իւրովք իջաներ ի քաղաքն Սամոսատայ, յորում մեծապատիւ իսկ եպիսկոպոսէն և եկեղեցւոյն մեծարեալ լինէր: Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռուփինոս անուն գտեալ, որ զամենայն ընտրութիւնս նշանագրոցն զնրբագոյնն զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ»¹:

Կորյունի հաղորդած այս վերջին տեղեկությունը վոմանք հասկանում են այն ձեռվ, վոր իր Հռուփինոսը ստեղծում ե հայկական գրերի զանազան տեսակները, ըստ վորում, Կորյունի հիշված հատվածը նման մեկնարանություն տվող բանասերները «Նրբագուն»-ը համարում են նոտր գիրը (!), «կարճ»-ը — ուղղագիծ յերկաթգիրը, «յերկայն»-ը — բոլորանեւ յերկաթգիրը և «առանձին»-ը — փակագիրը: Մեր կարծիքով Կորյունի այդ տեղեկությունը ձիշտ չի աեկնարանվում: Տեքստում պարզ ասված ե, վոր Հռուփինոսը խնամքով զանազանեց թանձը և նուրբ, կարճ և յերկար գծերը՝ լինեն նրանք ինքնակապ կամ զուգընթաց՝ պատշաճելով և ներդաշնակելով իրաբ:

Մաշտոցն այսուհետեւ վերագրառնում ե Հայաստան և սկսում մեծ աշխատանք՝ ինչպես թարգմանության, այնպես և ինքնուրույն ստեղծագործության գծով:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՆՄՈՒՇԵՐԸ:

Հայկական պալեոգրաֆիայի հիմնական բազան — հայերեն ձեռագրերը և վիմագիր արձանագրություններն են: Նրանց քանակը վերջնականապես ճշտված չե: ձեռագրերի մոտավոր թիվը — 23 հազար և հաշվում, իսկ վիմագիր արձանագրություններինը — 2—3 հազար: Վիմական արձանագրությունները գտնվում են գլխավորապես Հայաստանի նախկին տերիտորիայում, իսկ ձեռագրերը ցրված են աշխարհի գրեթե բոլոր գլխավոր քաղաքների թանգարաններում:

Հայկական ձեռագրերի ամենամեծ ժողովածուն աշխարհում հանդիսանում ե մեր պետական սատենագարանը: Մենք ունենք մոտ 10.000 ձեռագրեր: Մեր մատենադարանի ժողովածույի մեջ մտնում են՝ նախկին Եղմիածնի, Տաճկահայաստանի, Սեվանի,

¹ Մեծ Կորյուն, հջ 19 (Վենեաիկի հրատարակություն):

Տաթեսի, Ներսիսյան դպրոցի, Լազարյան ճեմարանի, Յերեվանի գրական թանգարանի, Պետական համալսարանի և բազմաթիվ այլ ժողովածուներ:

Հայկական ձեռագրերի հարուստ և արժեքավոր ժողովածուներ են հանդիսանում Վենետիկի միաթարյան միաբանության մատենադարանը—մոտ 4.000 ձեռագրով, Յերուսաղեմի հայկական պատրիարքարանի մատենադարանը—մոտ 3000 ձեռագրով, Վիեննայի Միհիթարյան միաբանության մատենադարանը—մոտ 600 ձեռագրերով և այլն:

Վիմական արձանագրությունների զգալի մասը հրատարակված է: Այդ ուղղությամբ ամբողջացնող լավագույն աշխատություններ են հանդիսանում՝ Կարապետ Կոստանյանի կազմած «Վիմական տարեգիր» (Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց)»-ը, ակադեմիկ Ն. Մառի Տիկորի տաճարի, Սանահինի և Բերդաձորի կամուրջների մասին արձանագրությունների ուսումնասիրությունը (տես «Христианский Восток» տ. IV, в III и IV), ակադ. Հ. Որբելու՝ Մարմաշինի, Բագավանի և հայկական տասայլ արձանագրությունների մասին կատարած ուսումնասիրությունը (տես «Христианский Восток» տ. II, в I, т. III в 1, т. III в 3, т. V в. 2) և այլն:

Մեծ աշխատանք է կատարված նաև հայերեն ձեռագրերի ցուցակների հրատարակման ուղղությամբ: Ձեռագրերի արժեքավոր ցուցակներ են հանդիսանում Տաշյանի կազմած՝ Վիեննայի Միհիթարյան մատենադարանի ձեռագրերի ցուցակը, Ն. Յ. Մառի կազմած՝ Սեվանի ձեռագրերի ցուցակը, Հ. Աճառյանի՝ Թարգիրդի ձեռագրերի ցուցակը, Յե. Լալայանի՝ Վասպուրականի ձեռագրերի ցուցակը, Սարգսյանի՝ Վենետիկի մատենադարանի ցուցակը, Շահնազարյանի (Կարինյանի հրատարակությամբ)՝ Եջմիածնի ձեռագրերի ցուցակը, Բասմաջյանի—Փարիզի ազգային մատենադարանի ձեռագրերի ցուցակը, Թոփճյանի—Խաչիկ վարդ.—ի ձեռագրերի ցուցակը, Քարամյանի—Բեռլինի արքունի մատենադարանի ձեռագրերի ցուցակը և ուրիշները:

Անհրաժեշտ է նշել, վոր կան ձեռագրերի մի շարք ցուցակներ, վորոնք կազմվել են դեռևս միջին դարերում: Մեզ հասել է, որինակ, Վարդան Բաղրամյուն՝ ձեռագրերի ցուցակը (տես մեր մատենադարանի թիվ 737 ձեռագիրը), Սանահինի վանքի XVII դ. ձեռագրերի ցուցակը (տես մեր մատենադարանի թիվ 3031 Սանահինի Քյոթուկ կոչող ձեռագիրը) և այլն:

Վերջերս կազմված է և կհրատարակվի մեր մատենադարա-

Նի ձեռագրերի ամբողջական ցուցակը։ Այդ ցուցակի մեջ կմտնեն ինչպես հայերեն, անպես և այլ լեզուներով (արաբերեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն և այլն) յեղած ձեռագրերի նկարագրությունները։

Հնագույն հեղինակների աշխատություններից մեծ մասը, վորոնց թվում և հին հայ հեղինակների աշխատությունների դրամի մասը, իրենց ավտոգրաֆներով (ինքնագրերով) չեն հասել մեզ։ Նրանց աշխատություններն ընդորինակվել են ուշ շրջանի արտագրողների կողմից, և մեծ մասամբ այդ ընդորինակություններով ե, վոր մենք ծանոթանում ենք հին հեղինակների աշխատությունների հետ։ Այսպես, մեզ չի հասել Խորենացու, Յեղիշեյի, Յեղինիկի, Շիրակացու, Ղեկոնդի, Անեցու և հին հայ մի շարք այլ մատենագիրների աշխատությունների ինքնագրերը։ Խորենացու պատմության մեջ հասած ամենահին ձեռագիրը—IX դարում գրված մի պատառիկ ե, վորը գտնվում է մեր մատենագարանում։ Յեղիշեյի պատմության ամենահին ձեռագիրը «Անձնացյաց» կոչվող որինակն ե, վորն ընդորինակված ե 1172 թվից (գտնվում է մեր մատենագարանում), Յեղինիկի «Եղծ աղանդոց»-ի միակ և և ամենահին ընդորինակությունը 1280 թվից ե (գտնվում է մեր մատենագարանում), Շիրակացու «Յաղագս երկնի» աշխատության մեզ հասած հին ընդորինակությունը 971 թվից ե (գտնվում է մեր մատենագարանի ամենահին թղթի ձեռագրի ժողովածույթյուն), Ղեկոնդի պատմության մեզ հասած ամենահին ձեռագիրը XIII դարում կատարված ընդորինակությունն ե (մեր մատենագաբանի սեփականությունն ե), Սամվել Անեցու ժամանակագրության մեջ հասած ամենահին ձեռագիրը 1176 թվի ընդորինակություն ե, կատարված ե Անեցու կենդանության ժամանակ (գտնվում է ձեռագիրը մեր մատենագարանում): Շատ քիչ քանակություն են կազմում մեզ հանած միջնադարյան հայ մատենագիրների ինքնագիր ձեռագրերը։ Այդ մատենագիրներից են՝ Ռոբելյանը, Յեսայի Նշեցին, Գրիգոր Տաթևացին, Ամբրոգվլաթը և ուրիշները։

Հին հայերեն լեզվով մեզ հասած ամենահին գիրը — Տիկորի արձանագրությունն եւ Նա գրված ե Հովհաննես I Մանդակունի կաթողիկոսի ժամանակ (478—490 թ.): Արձանագրության մեջ հիշվում ե նաև Սահակ Կամսարականը, վորը V դարի անձնավորությունն եւ «...հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յովհանու Հայոց կաթողիկոսութեան եւ Յոհանու Արշարունեաց» յիւր բարեխաւութիւն եւ բոլոր ազգին եւ ամուսնի եւ որդեկաց եւ


սիրելեաց և Սահակ Կամսարական շինեաց զ(այ)ս վկայաբան
սըբոյ Սարգսի»:

V դարի գրչություն և համարվում նաև մեր մատենագա-
րանի № 1577 ձեռագրի պահպանակը: Ձեռագիրը 1283 թվին կազ-
մելիս վերցրել և պահպանակ են գործ ածել այդ ժամանակ քայ-
քայված հնագույն ձեռագրի թերթեր, վորոնք V դարի գրչու-
թյուն ունեն: Պահպանակը V դար համարվում և յենթագրաբար՝
գրի պալեոգրաֆիկ տվյալների և գրության արխայիկ բնույթի
հիման վրա: Գրությունն, իր ձևով, ամենահինն և յերեւում քան
մեղ հայտնի հայկա-

կան գրություններից
վորոնե մեկը: Այստեղ
մենք առաջին անգամ
հանդիպում ենքը՝ ի-
վերին գիծը հունակա-
նի նման միացած ձե-
վով, «ը»-ի և «փ»-ի
միջին գիծը ներքեւ և
էջնում սեպի նման
սուր ծայրերով, «ա»-
յի վերջին յելանը վնչ
թե ներքեւ և թեքվում,
ինչպես Լազարյան ա-
վետարանում և կամ
մեսրոպյան այլ գրե-
րում, այլ հունական
«ա»-ի նման բարձրա-
նում և վերև և այլն:

VI դարում գրված
հայկական գրության
արժեքավոր ունիկում-
ներից և համարվում
պրոփ. Կարիերի՝ Ցե-
ղիպոսոսում ձեռք բերած պապիրուսը: Նա գրված և հայտառ
հունարեն: Տեքստը, զժբախտաբար, վասնված և ամբողջությամբ
չի կարդացվում: Նա հրատարակված և Տաշյանի կողմից նրա
«Ակնարկ» մը հայ հնագրութեան վրայց աշխատության մեջ:

VI դարից մեղ հասած հայերեն արձանագրություններից



Նկ. I.—№ 1577 ձեռագրի պահպանակի ուա-
ռաձնելը՝ Լազարյան ավետարանի տառերի
հետ համեմատած

մեծ արժեք և ներկայացնում Յերուսաղեմի Զիթենյաց սարի վրա դտնվող մողայիկ արձանագրությունը։ Վումանք այդ արձանագրությունը համարում են VII դարում գրված։ Արձանագրությունը գրվել և վոմն վաղեսի կողմից։

VII դարից մեզ հասել են հայկական գրության մի շարք նմուշներ։ Այդ արձանագրություններից թվական ունի Անբի միջնաբերդի՝ Կամսարականների բաղիլիք յեկեղեցու վրա յեղած վիմագիր արձանագրությունը։ Ակադ. Ն. Յ. Մարք սկզբում կամ կածել և արձանագրության ժամանակի նկատմամբ, բայց հետագայում մոտից ուսումնասիրելով արձանագրությունը գտել ե, վոր իրոք նա գրվել և նշված թվականում (տես H. Marr, Новые археологические данные о постройках типа Ере- рийской базилики З. В. О. XIX.).



Նկ. 2.—Յերուսաղեմի մողայիկ արձանագրություն։ սրբոց վկայից քի։

վոր արձանագրություններից և Թալինի մատուսի արձանագրությունը, վորը թողել և Ներսես Կամսարականնը, հավանական եր, վեց հարյուր յերեսնական թվականներին։ («Ես Ներսես ապօնւապատ պա (տրիկ Շիր) ակայ և Արշարունեաց աէր շինեցի զեկեզիս...») և Մթենի տաճարի արձանագրությունը՝ գրված Դավիթի Սահառունու կուրապալատության ժամանակ (638—640 թ. թ.), Այս յերկու արձանագրությունները մանրամասն ուսումնասիրված են ակադեմ. Հ. Ա. Որբելու կողմից (տես «Христ. Восток», том II, вып. СПБ. 1913).

VII դարի գրչություն ունեցող եքսպոնատներից կարելի յե-

VII դարի հետաքըրքից
արձանագրություններից և Հոփիսիմեյի տաճարի արձանագրությունը, վորը կառուցել և Կոմիտաս կաթողիկոսը։ Արձանագրության մեջ ասվում ե. «Ես Կոմիտաս եկեղեցապան սրբոց Հոփիսիմէի կոչեցայ յաթոռ սրբոյն Գրիգորի, շինեցի տաճար

VII դարի արժեքա-

հիշատակել մել մատենադարանի մի շարք ձեռագիր պատառիկներ: Նրանցից կարելի յե նշել № 108 և 109 պատառիկները: Պալեոգրաֆիկ ուսումնասիրությունը պարզում է, վոր այդ պատառիկներն ունեն ճիշտ այնպիսի գրության ձև, ինչպիսին VII դարի գրություն ունեցող հայկական արձանագրություններն են: Հայերեն լեզվով մեզ հասած ամենահին ձեռագիրն աշխարհում; վորը թվական ունի—դա Լազարյան կոչվող ավետարանն է: Նա գտնվում է մեր մատենադարանում: Ձեռագիրն ունի գրչի հետեւյալ հիշատակարանը. «Գրեցաւ սուրբ եւ կենսաբեր աւետարանս այս ՅԼ. 9 (=336+551=887) թուականութեան Հայոց ի հայրապետութեանն [Գէ]որդայ Հայոց կաթողիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի եւ ի տերութեանն Սմբատայ Բագրատունւոյ. ես Սահակ Վանանդեցի որդի Վարդա Վանանդացւոյ որում կրկին Մլիճ կոչեի[ն]:»

Գրչության հասպույն և լավագույն եքսպոնատներից և 909 թվին Մլիք թագուհու պատվերով գրված մանրանկարչական մեծ արժեք ներկայացնող ավետարանը: Նա ունի հետեւյալ հիշատակարանը. «Ես Մլիք աղախին քրիստոսի և Հայոց թագուհի...թվականիս, ետու զաւետարանս ի Վարդի սուրբ Աստուածածնիս զորիս ձեռամբս և ծահաւք եմ շինեալ յաւգնականութիւն ինձ և արքային իմոյ Գրագիայ և զաւակաց իւրոց...ՅԾԱ. թ. արաց իլ...»: Զեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում:

Խ դարից մեզ հասել են մի շարք այլ ձեռագրեր, վորոնք բոլորն ել կանոնական բովանդակություն ունեն և գրված են մագաղաթի (պերգամենտի) վրա: Մեզ հասած ամենահին հայերեն (լեզվով գրված) ձեռագիրն աշխարհում,—մեր մատենադարանի № 2679 ձեռագիրն եւ վորը պատմագիտական նյութերի ժողովածու յե հանդիսանում: Հիշատակարանից յերեսում ե, վոր նա գրվել և 971 թվին: Զեռագիրը տասը տարի հետո նորոգվել եւ նորոգողը թողել ե իր հետեւյալ հիշատակագրությունը. «Եւ է նորոգումն սորա նլ. (=981) թուականութեանս հայոց»:

Գրչության հնության տեսակետից մեծ արժեք և ներկայացնում մեր մատենադարանի թիվ 963 մագաղաթյա ձեռագիրը: Ձեռագիրը պալմական և (կրկնագիր): Պալմական կոչվում են այն ձեռագրերը, վորոնք մեկ անգամ գրվում են մագաղաթի վրա, իսկ հետագայում այդ գրված տեքստը ուրիշ մեկի կողմից լվացվում ե և նորից գրվում: Համախ և պատահում, վոր նման լվաց-

ված ձեռագրերում նախկին տեքստը նոր գրվածի տակից յերեւ-
վում եւ: Մեր նշված ձեռագիրը պատկանում է հենց այդ ձեռա-
գրերի թվին: Ձեռագրի հիշատակարանից յերևում եւ, վոր Հովհան-
նես անունով մեկը, հավանական է XIII դարում, լվացել եւ հա-
յերենով գրված հին տեքստը, վորը, հայանական եւ, գրված
եւ յեղել VIII դարից առաջ: Զլվացված մնացել են ձեռագրերի
պահպանակները: Այս ձեռագրում մնացել եւ հին հայկական ման-
րանկարչության մի գեղեցիկ նմուշ՝ մուգ կապույտ գույներով:

Վերջապես, հնագիտական մեծ արժեք են ներկայացնում մեր
մատենագրաբաննի «փղոսկրե» կոչվող ավետարանը, վորը գրված եւ
998 թվին: Սա ամենահին հայերեն ձեռագրերից մեկն եւ, վորը
իշտաբացիա ունի: Նրա մեջ յեղած նկարներն ու զարդագրու-
թյունները գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում: Զե-
ռագրի կազմը համարվում է V դարի գործ:

Բացի թվաբակած հնագիտական արժեքավոր այս տեքստե-
րից, մենք մեր մատենագրաբանում ունենք մեծ քանակությամբ
պատառիկներ և պահպանակներ, վորոնք զեր ուսումնասիրված չեն:

3. ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐԸ

Գրիչները—հայ անցյալ կուլտուրայի պահպանման ու զար-
գացման չարքաշ մշակներն են հանդիսացել: Հայածանքի, սովի,
գաղթի և ամեն տեսակի ծանր պայմաններում նրանք անգնահա-
տելի աշխատանք են կատարել ինչպես հին հայկական ձեռագրե-
րի ընդորինակման, այնպես և ստեղծագործական նոր արժեքնե-
րով հայկական կուլտուրան և գրականությունը հարստացնելու
ուղղությամբ:

Հայկական գրիչների վորոշ մասը, հատկապես նրանք, վո-
րոնք ցածր խավերից են,—պրոֆեսիոնալ գրչությամբ գրադվոր
մարդիկ են հանդիսացել: ՀԽՍՀ Պետ. մատենագրաբաննի թիվ 4107
ձեռագրի գրիչը իր 1420 թվ. ընդորինակած ձեռագրում հետեւ-
յալն ե գրում. «Բայց գիտեմք, որ գիրդ բաղում պակասութիւն
կայ և անթիւ. թէպէտ որ՝ շատ կայ՝ մեր կարն այդշափդ էր,
ձեռս կու դողայը և աչքս բնաւ չէր տեսնուել, գրչի մատն չորա-
ցած էր, միջին մատամբս ծրեցաք... ուն դարդ իմ՝ հիմայ 42 (ԽԲ)՝
տարի է որ մեր բանս այս է, ապա այսօր նման անդեպ չէր
եղեաւ, իսկսա կու ամաչեմ ի ձեզնէ, թողութիւն արարէք»: Քա-
ռասուն և յերկու տարի մարդը զբաղվել է գրչությամբ, գրելու
մատը չորացել եւ, բայց նա չի ուզել ցած դնել իր գրիչը: 34-րդ

տետրակից հետո նա դադարում է գրելուց և նրա աշխատանքը շարունակում է իր աշակերտը, Հունար գրեէթ:

Մի ուրիշ գրիչ, վորն իր ամբողջ կյանքում զբաղվել է ընդորինակություններով և այդ ընդորինակությունները վաճառելով և ապրուստ հայթհայթեր իր վոտանավոր հիշատակարանում գանգատվում է (ձեռադիրն ընդորինակված է 1280 թ. Բամբել գրչի կողմից).

«Քանքար հոյր զի վարձէի՝
Մատատամբո քանի ես գրէի:

Յայս միջոցին անձն իմ կոծի
Եւ վարանի յամենայնի,
Թէ զի՞նչ օգուտ ինձ յայս ջանի,
Թէ ընթեանուլ ինձ նչ լինի:
Մի յոյս միայն գերոյս թողի՝
Թէ եկելոց վայել լինի:
Զի թէ այս ոչ դոյր առաջի՝
Կարծեմ սակաւ գոյր գիր յերկրի:
Որպէս և ես վարանէի,
Աւաղ թէ ընդ վայր ջանս իմ լինի:
Եւ ամենայն, որ զայս խորհի,
Սակաւ տանի հոգք այս գործի:
Այդ ըստ յուսոյն որ կայ առաջի՝
Միշտ յօժարեալ գիրս ոք ստացի:
Զի տէրունի բանն լցցի՝
Սյուց վաստակ այլում լինի...»:

(Տես ՀԽՍՀ Պետ.մատենադարանի թիվ 1418 ձեռագիր՝ թերթ 125ա):

Գրիչների վորոշ մասը, զլխավորապես յեկեղեցական բարձը գասին պատկանող անձինք, ապրել են բավականին շքեղ ու փարթած կյանքով, իսկ մյուս մասը, ավելի ստորին խավերը, աշխատել և ստեղծագործել են շատ ծանր պայմաններում: Նրանք հաճախ են գանգատվում ցրտի, լույսի վատության, տանիքը կաթելու, հացի պակասության և այլ գեվարությունների մասին:

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 2544 ձեռագրի գրեչն իր պատվիրատույից ինդրում և ներողամիտ լինել ձեռագրի պակասության համար: Յես զիտեմ, — ասում ենա իր պատվիրատույին, — վոր այդ ձեզ վայել ձեռագիր չե, ձեզ համար գրածը «ոսկեզիրը պիտէր և ճարտար գրչի, և ես շատ պատճառ ունէի, որ խափանէր զիս յայս ձեռնարկութենէս՝ տկարութիւն և մութն խրճիթ և հողմ պախարու, փոշէխառն փշելով ընդ պատուհանս և պաղ աւղա...»:

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի՝ 1663 թվին ընդուրինակած
որ ձեռագրի հիշատակադիր գրել և հետևյալ գանգատը՝

«ՌՃԲ թուականին,
գանգատ ունիմ ճրագի մթին.
այլ և յետոյ՝ այս խնամ թղթին,
որ չի երթար յետ իմ սրտին...»

(Թիվ 5623 թ. 224 Բ.)

Մխիթար Անեցին իր՝ 1338 թ. ընդուրինակած ձեռագրի վու-
տանավոր հիշատակարանում գանգատվում և մի շարք դժվա-
րությունների համար:

«Մեծ վտանգի կամ յայս նեղուս.
զի խիստ յաղթեց ցավն մարմնոյս:
Եւ ի ձեռացս ի գողալուս.
այլ չեմ կարել տալ շատ գրոյս:
Եւս առաւել ի յայս շողուս,
Ու ի թանաքի թանձրանալոյս,
և մանաւանդ ի յայս քնուս,
զաւը հասարակ մրափելոյս:
Եւ յանիծեալ այս ճանձերուս,
ի մնավաստակ կենդանուս.
որ միշտ նստին ի վերայ գրչուս
ծըծեն զթանաքն գրերուս.
կենէ մի սիրտ այս ոչընչնուս.
չգիտեմ թ(է) ինչ առնեմ նղովծուս.

Այլ երբ կուտա իմ աչքս լըւս.
որ ես այլ շար տամ գրելուս:
եղբայր մեղ մի դրէք գրերուս,
այս տառապեալ ւողորմելոյս.
ինչ հնացաւ տարիք մատնաւս,
պէս պէս ցաւեր յայտնի ծերուս:
Օ՛խ թէ լինէր ճար այս նավուս,
որ հասանէր յեզր ի ծովուս,
որ նս տեսնում զվերջք գրուս.
ու առա հասանի ի մահն հողուս»:

(Թիվ 4429 ձեռագիր)

Գրիչների վրա առանձնապես ծանր աղդեցություն են ունեցել քաղաքական դժվար պայմանները: Միքայել Յեղոկեցին էր 1589 թ. ընդորինակած մի ձեռագրի հիշատակարանում ընթերցողներից հետեւյալն ե խնդրում. «Անմեղադիբ լեռուք ծոազրչութեան նոտրիս, զի ի մէջ դառնութեան գրեցի զայ՝ այսպիսի դառն և դժուար տանջանաւք...» (ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 1869 ձեռագիր):

Մի այլ գրիչ էր 1360 թ. ընդորինակած ձեռագրի հիշատակարանում գրում են՝ լրւյսի պակասության («Եթե յոն չնստի քեզ գիրս, նա պատճառն այն էր եղբայր՝ ձէթի տակն էր և ճրագլուս պակաս»), թանաքի վատության («Աւաղ թանաքիս վատութեան»), կաթելքի («Վայ յոլովութեան յորդ անձրեխ, որ խափանումն ածէր գրիս»), ճանձի և լուի շատության («Աւաղ բազմութեան ճանջից և լուիցու, որ յոյժ վասնդին զիս»), թղթի ու գրչի վատության («Վայ քեզ սուտանուն Զաքարիա, գրիչն մեկ անգամ կտրեցի և տասը թուղթ գրեցի»), ցավելի լուրեր լսելու («Աւաղ և վայ որ լուա այսպէս համրաւ», «Ո՞չ ի լսել այսպիսի կոկծանաց գործոյս») և այլ պակասությունների և դժբախտությունների համար:

Շատ են գրիչների մոտ մորեխի, համաճարակի և սովի համար արգած գանգատները: 1713 թվ. ընդորինակված մի ձեռագրի հիշատակարանում գրիչը հետեւյալն ե պատմում:

«Ի թիվ հազար հարիւր վացսուն,
երկոյ աւել ի հետ ի նոյն,

եկալ մարախ բազում անհուն

ի քաղաքն Երևանոյն:

Ծածկեալ եղե երեսս օդոյն,

եհեղ երկնից իրեւ զձիւն,

թռաւ իջաւ մէջ արտերոյն,

սկսաւ ուտել իրեւ զշուն:

Մահն եկաւ ի նոյն տարոյն,

հաւասարեաց ամէն տեղոյն,

խիստ կոտորեց մանտր ոյ մեծոյն,

փառս տացուք ի աստծոյն:

Սովոր եկաւ ի նոյն տարին,
 խանն շահի եղավ գարին,
 սոված փարզեց դաշտ ոյ սարին,
 աստուած քրկէ եկող տարին:
 Մուկն եկաւ ի նոյն տարին,
 հաց ոյ դարձան յախիր արին,
 խոտ չմնաց բնաւ ի սարին,
 էլ չտեսնենք այսպէս տարին...»

(Թիվ 2444 ձեռագիր)

Քիչ չեն նաև տեղահանության, գաղթի համար գրված գանձատները. Շատ կան գեղքեր, յերբ գրիչը սկսում ե վորոն ձեռագրի ընդորթնակություն, մեկ ել ահա հարձակվում ե թշնամին և նա ստիպված ե լինում գրած ու չըլրած մագաղաթը շալտել և տեղից տեղ տեղափոխվել. Շատ ու քիչ տեղական կանգ առած տեղում շարունակում ե գրել և այդ մասին անում ե իր հիշատակագրությունը:

Մեզ մոտ, անցյալում, անհրաժեշտ ե նշել, ձեռագիրը ամենանվիրական իրն ե համարվելու Գաղթելիս հաճախ թողել են իրենց տան վողջ գույքը, անսառնները, բայց ձեռագիրն աշխատել են ազատել իրենց հետ:

Ձեռագրին անցյալում շնչավորում ե տրվել. Զեն ասում, որինակ, ձեռագիրը թալան տարան, այլ ասում են գերի տարան, կամ ձեռագիրը գերությունից ազատեցինք:

Ձեռագիրն անցյալում բավականին թանկ ե զնահատվել. Ուրինակ, 1668 թվ. գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Դարձեալ յիշեցէք գնաւդ սուրբ աւետարանիս զՄարզարիան, որ ետք եղ, թ ձի, կով մի և էտո յիշատակ ի մեր էրիցէս...». Ուրեմն այդ ձեռագիրն արժեցել ե 2 յեղ, 2 ձի և մի կով: Մի այլ ձեռագրի հիշատակագրությունից պարզվում է, վոր տվյալ ձեռագիրը գտնվել ե «գերության» մեջ և նա «գերութիւն»-ից ազատելու համար տվել են «կով մի» և փափասի արժէք, թ շահի գրամ, և քիլայ ցորեն՝ ժ փափասու տուին, ազատեցին... ի գերութենէն...» (ՀԽՍՀ Պետ. մատենագրաբան, թիվ 212 (ս. 5.):

Արգելվել ե ընդհանրապիս մեկ անգամ զնված ու հիշատակ տրված ձեռագիրը նորից վաճառել կամ գրավ զնել 1442 թվ. գրված մի ձեռագրի գրեչ, որինակ, կտակում ե՝

«Իշխանութիւն ոչ ոք չունե՞
տալ գրաւական վասն արծաթի,
կամ վաճառել ընդ քանքարի՝
զի է՝ յազատ ամենայնի...»

(Մեր մատենադարան, ձեռ. թիվ 62, Յերեվանի ժողովածու):

Գրիչներն իրենց ընթերցողներից շատ են խնդրում լավ պահել ձեռագիրը՝ խնամքով բռնել, հեռու պահել կաթիւթից, կրակից, մրից և այլ կեղտից: Աստվածատուր գրիչն, որինակ, իր 1677 թվ. գրած հիշատակարանում հետեւյալն ե խնդրում՝

«Ով դու մանուկ սիրող բանի.
յինէն պատուէր քեզ այս լիցի.
յորժամ ընթերցման պատշաճ լինի՝
Խնամով բռնես և զդուշալի:

ի հրոյ և ի ջրոյ և ի կաթիւթի,
և այլ ամենայն անմաքուր բանի...»:

(ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 7046 ձեռագիր)

Մեր թիվ 5597 ձեռագրի հիշատակիրը իր ընթերցողին պատվիրում է՝ «զգուշացիր յամենայն դժբողաց զսայ, ի ցեցոյ և ի կերչաց և ի հիւթոց և յամենայն վատնողաց զվայելչութեան դորա, միանկամայն և վերարկուծածկութիւն հոգ տարցես զմայ, և որպես իմաստուն վաճառական պատուական մարդարտաց...»:

Ձեռագրերի վրա գրիչները աշխատել են բավկանին յերկար ժամանակ: Վորոշ ձեռագրերի տառերը, կարելի յե ասել, վոչ թե գրել, այլ նկարել են: Պատահում են ձեռագրեր, վորոնք գըրվել են յերեք, չորս և ավելի տարիների ընթացքում: Այսպես մեր մատենադարանի թիվ 4472 ձեռագրի գրիչը իր ընգորինակած ձեռագրի մասին հետեւյալ տեղեկությունն ե տալիս. «Եւ գիտելի է զի սա սկսաք ԶԱ թվականիս հայոց և աւարտեցաք ԶԶ՝ վասն դառնութեան և խոռվութեան ժամանակիս: Եւ զյիշատակարանի գհետ կարգի ոչ գնալոյն անմեղադիր լերուք՝ երբ սիրտն մաշխեալ լինի՝ աշքն լուս պակաս կու հայի: Մարդ զմարդոյ ցաւ չգիտէ՝ կէս գիշերին ժամ կու ձենէ»: Մի այլ ձեռագրի գրիչ 1378 թվ. գրած իր հիշատակարանում հայտնում ե. «...յոզնակի սիրով գրեցի ամս է» (ՀԽՍՀ Պետ. մատենադարան, թիվ 2680):

Բացի գրչից, ձեռագրի վրա հաճախ աշխատում են նաև այլ

մասնագետներ՝ նկարիչներ (ծաղկողներ), մագաղաթը կոկողներ, ձեռագիրը կազմողներ և այլն: Գրիչն այդ գեպքում իր հիշատակարանում խնդրում է հիշել իրեն ոգնող այդ մասնագետներին: Յեթե գրիչը մյուս աշխատանքները ևս ինքն է կատարում, կամ գնել է թուղթը, սովորաբար հիշում է իր հիշատակարանում: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 5568 ձեռագրի հիշատակագիրը հետևյալն է հայտնում:

«Նիւթ և մելան գղթորիս, թողիսն է արջասպն աւղթիցիս, գույն սպիտակ քարտէղիս, թանկ գնեցի ևս գիրիս...»:

4. ՏԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Հայկական գրերի տեսակավորման խնդրում աղթյուրագիտության մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Կարելի յեւ ասել, վոր հայկական գրերով զբաղվող ամեն մի հեղինակ տվել է գրերի իր սեփական տեսակավորումը: Հայկական գրերի տեսակավորման հարցում յեղած կարծիքների այդ տարբերությունը բղխում է մասամբ աղթյուրագետների տառաձեների նկատմամբ ունեցած վերաբերմունքի տարբերությունից: Այսպիս, որինակ, վոմանք գրերի տեսակավորման հիմքը տառերի մեծությունն են ընդունում, վոմանք—գծագրական ընորոշ հատկանիշները և այլն:

Հայկական գրերի տեսակավորման հարցով լուրջ զբաղվել են Քարամյանցը: Նա ընդունում է յոթ տեսակ գրեր և տալիս նրանց գրչության հետևյալ ժամանակները՝

1. Մեսրոպյան յերկաթագիր Ե—Ը դար, 5-3
2. Միջակ գիր Ը—Ժ դար, 8-10
3. Փոքը յերկաթագիր Թ—ԺԲ դար, 9-12
4. Բոլորզիր ԺԲ—ԺԴ դար, 12-14
5. Նոտը ԺԳ—ԺԼ դար, 13-18
6. Շեղագիր ԺԵ—ԺԹ դար, 15-19
7. Նոր շեղագիր ԺԹ-ից մինչև մեր որերը¹

Ինձիձյանն ընդունում է գրերի հինգ տեսակ՝ նշելով միայն նրանց ծագման ժամանակը՝

1. Յերկաթագիր Ե դարից հետո,
2. Յերկայնաձև յերկաթագիր Ժ-ԺԱ դարերից հետո,

¹ N. Karamianz, Verzeichniss ... Եջ 88.

3. Միջակագիր այդ նույն ժամանակում,
 4. Բոլորգիր ԺԲ դարից հետո,
 5. Նոտր գիր^{1:}

Հայկական գրերի տեսակավորման նոր փորձ և անում Հ. Տաշյանը: Նա բացի գրերի հիմնական տեսակներից ընդունում են անցան գրեր, ըստ վորում, հայկական գրերը նա տեսակավորում են հետևյալ յոթ խմբի մեջ՝

1. Գլխագիր յերկաթագիր,
2. Միջին մեսրոպյան յերկաթագիր,
3. Փոքր յերկաթագիր,
4. Անցման գիր,
5. Բոլոր գիր,
6. Նոտր,
7. Շղագիր^{2:}

Անհրաժեշտ են նշել վոր Հ. Տաշյանն առաջինն են, վոր հակառակ նախորդ աղբյուրագետների կարծիքի, աշխատել և ապացուցել, վոր գրերի վորոշ տեսակներ, մասնավորապես փոքր յերկաթագիրը, ավելի հսկց են դալիս, քան յենթագրվում են: Կանոնական-կրոնական գրականության համար գործ են ածվել գըլ-խագիր և սիջին-մեսրոպյան յերկաթագրերը, իսկ պատմա-գիտական գրականության մեջ՝ փոքր յերկաթագիրը:

Գրերի նոր և գիտական տեսակավորման փորձ են արել նորերս ընկ. Ղաֆաղարյանը, իր «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատության մեջ՝ տեսակավորման հիմքն ընդունելով գծագրական առանձնահատկությունները: Նա ընկունում է հինգ տեսակ հայերեն գրեր՝

1. Բոլորածե յերկաթագիր,
2. Ուղղագիծ յերկաթագիր,
3. Բոլոր գիր,
4. Շղագիր^{3:}
5. Նոտր գիր

Գրերի տեսակներից վոչ մեկն ընկ. Ղաֆաղարյանը ժամանակի մեջ չի սահմանագծում՝ համարելով գրերի այդ բոլոր տե-

¹ Խնճիճեան, Հնախօսութիւն, Գ, եջ 77-78:

² Հ. Տաշեան, Ակնարկ մը հայ հնագրութեան վըայ, եջ 34-49:

³ Կ. Ղաֆաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, եջ 17-18:

սակները Մեսրոպի ձեռքով ստեղծած և բոլոր ժամանակներում
գործ ածվող գրեր:

Գրերի նոր ձեռ տեսակավորումը ընկ. կ. Ղաֆաղարյանի
կողմից պետք է ասել, հետաքրքիր և և ընդունելի: Իրազես գծա-
գրական առանձնահատկությունների հիման վրա կատարած տե-
սակավորումն ավելի գիտական է, քան ուրիշ փորեւ հատկանշի:
Սակայն ընկ. Ղաֆաղարյանի այն դրվածքը, վոր հայկական գրերէ
բոլոր տեսակներն անխտիր Վ դ. են ստեղծվել, գիտական լուրջ
կովաններով չե հիմնավորվում: Գրերի փորոշ տեսակներ կարող
են ավելի հսկց գալ քան յենթալրվում ե, ինչպես նկատել և
Տաշյանը, բայց վոր հայկական գրերը ևս հարևան մյուս ժողո-
վուրդների գրերի նման ունեցել են իրենց զարգացումն ու փո-
փոխությունը—դա կասկածից դուրս ե:

Հայկական գրերը, մեր կարծիքով, պիտի բաժանել չորս
հիմնական տեսակների՝ յերկաթագիր, բոլորգիր, նոտր գիր և
շղագիր: Յերկաթգիրն, իր հերթին, պիտի բաժանել յերեք խմբի—
բոլորձեւ յերկաթագիր, ուղղագիծ յերկաթագիր և մանր յերկա-
թագիր: Վորոշել այս գրերից յուրաքանչյուր տեսակի գործադըր-
ման ճիշտ ժամանակը—անհնար ե: Մեզ չեն հասել հնագույն
տեքստերի մեծ մասը և մենք չգիտենք, որինակ, թե ինչ տեսակ
գրութ եյին գրվում պատմագիտական բովանդակություն ունեցող
ձեռագրերը Վ դարում: Մենք կարող ենք միայն մոտագորապես,
ընդհանուր ձեռվ ասել թե գրերի այս կամ այն տեսակը վոր
դարերում եր գերիշխող հանդիսանում և ինչպիսի բովանդակու-
թյուն ունեցող ձեռագրերում:

5. ՅԵՐԿԱԹԱԳԻՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇԵՐԸ

Մեզ հասած հայկական գրության ամենահին տեսակը—յեր-
կաթագիրն և հանդիսանում: Յենթալրվում ե, թե նա յերկաթա-
գիր և կոչվում այն պատճառով, վոր գրվել և յերկաթե ձողե-
րով: Կան բանասերներ, վորոնք յերկաթագրի անունը բացատրում
են վոչ թե յերկաթե ձողերով գրելու, այլ յերկաթե ժանգից թա-
նաք պատճառելու պատճառով:

Գրերի այդ տեսակը յերկաթագիր անունով մեր մատենա-
գրության մեջ հիշելն այնքան ել հին չե: Ամենահին հեղինակը,
վորը գործ և ածել այդ տերմինը, վորքան մեզ հայտնի յե, Միի-
թար Ապարանցին ե, Նա, խոսելով աստվածաշնչի մասին, հայտ-
նում ե, վոր նրա զանազան մասերը գտնվում են «ի մագաղաթ

եւ ի թուղթ, երկարագիր եւ գրչագիր»: Մասնավորելով նա խոսքը սադոսսի վրա, գրում ե. «Ոչ է միապէս ամենայն Սաղմոսարան, որպէս յայտ է յերկարագիր եւ ի գրչագիրս եւ յայլ միջակմ» (համեմ. «Հայկազեան բառարան»):

Յերկաթագրով են գրված մեզ հասած հին հայկական գրեթե բոլոր ձեռագրերն ու վիմագիր արձանագրությունները: Կանոնական-կրոնական բովանդակություն ունեցող գրականությունը գրված և բոլորգիծ և օլուղաղիծ յերկաթագրերով, իսկ պատմա-գիտական և մեկնողական գրականությունը—մանր յերկաթագրով: Մանր յերկաթագիրը, հավանական ե, մեր գրականության մեջ սկսվել ե գործ ածվել V դարեց:

Իրար հետ հավասար հնություն չունեն բոլորգիրը և ուղղագիծ յերկաթագիրը: Առաջինը գործադրվել ե հնագույն շրջանում, իսկ յերկրորդը մոտավորապես—IX—X դ. դ.:

Յերկաթագիրը, համեմատած գրեթի մյուս տեսակների հետ, ունի հետեւյալ առանձնահատկությունները.—


ա) Յերկաթագիրը մի քանի անգամ խորշոր ե, քան հայկական գրության մյուս տեսակները:

բ) Յերկաթագրով գրված տեքստերի մեծ մասը չգիտե բառանշատում—յերեք, չորս և յերենն ավելի բառ Նկ. 3. Բոլորան յերկաթագիր VIII - IX դ. դ.

մեր գրվում են միացած ձևով և բառանշատումը կատարվում է կետից հետո:

շ) Յերկաթագիր տեքստերը չունեն «և» տառը—գրվում ե «և» ձևով (սովորաբար, հաջորդող բառին միացած), «օ» տառը—գրվում ե «օւ», և «փ» տառը չի գործածվում: Բոլորգիր և նոոր գրով գրված հնագույն վորոշ տեքստերում պահպանվում են յերկաթագրի այս ձևերը:

դ) Յերկաթագրի տեքստերի մեծ մասում «լ» տառը վորոշ



բառերում փոխարինվում ե «զ»-ով—այդ>այլ, Աղէքսանդրիա>
Ալէքսանդրիա, այդակերպեալ>այլակերպեալ և այլն:

Բոլորաձև յերկաթագիրը և ուղղագիծ յերկաթագիրն ու-
նեն իրարից տարբերվող հետեւյալ հատկանիշերը.—

ա) Բոլորաձև յերկաթագրով գրված տեքստը նոր տողեց
սկսելիս, սկզբի առաջին տառը իր մեծության կիսի չափով
տեքստի առաջին գծից դուրս և գրվում:

բ) Բոլորաձև յերկաթագիրն ունի կլոր ձև, տառասյուները
միացնող գծերը կամարաձև են և ուղղագիծ: Նըանք յերկաթագը ե
նման քառակուսի ձևով չին նստում տողի վրա:

գ) Բոլորաձև յերկաթագիրը բացի միջակետից չգիտե այլ
կետ, ըստ վորում, միջակետն ունի քառակուսի ձև և գրվում ե
տողից վերև:

դ) Բոլորաձև յերկաթագրի տեքստերում հապավված են լի-
նում միայն մի քանի անուններ:

ե) Բոլորաձև յերկաթագիրը մյուս գրերից տարբերվում ե
հետեւյալ տառաձևերում:

ա) «թ»-ի յերկրորդ գիծն իջնում ե մինչև տողը (թ)

բ) «ս»-ի առաջին գիծն ավելի յերկար ե և թեք (ս)

գ) «վ»-ի առաջին գիծը հավասարվում է յերկրորդին (վ)

դ) «կ»-ի յերկրորդ գիծը շատ կարճ ե և թեք (կ)

ե) «՛»-ն սկսվում ե ի տառի վերին յերկարությունից (՛)

նկ. 4.

Ծառ ավելի հին ձեռագրերում, որինակ V գարի գրչություն
համարված ֆրագմենտում, ինչպես արդեն ասել ենք, տարբեր-
վում են հետեւյալ տառերը.—

«ա»-ն գրվում ե հունական «ա»-ի նման (ա)

«ը»-ն վերևի գծում միանում ե (ը)

«ե»-ն գրվում ե հունական եպսիլոնի նման (ե)

նկ. 5

Հայկական հնագույն գրչագրերից Լազարյան ավետարանում
նկատվում ե ուղղագրական հետեւյալ տարբեր ձևերը.—

ա) Ավելադրություն «յ» տառի—յայգեցան, դարձոյ: մատոյ:
հատոյ, գործեայ, կոչեայ, նմայ, սմայ և այլն:

բ) Ավելադրություն «վ» տառի—ովմա, ովմանք, որովգայթ,
Պետրովս, քարովզութիւն, բարւովք և այլն:

գ) Հապավումն «ը» տառի—յնթրիս, զնկեր, զնտրեալ, յնչից
և այլն:

դ) Հապավումն «յ» տառի—զգոշ, վկաից, հայհոռութիւն, ու-
ղորմեցա, հաճեցա, պիտո, գո, միո, արտաքո, յորդւո, թղենո
և այլն:

ե) «ե» գրվում ե «է»-ի փոխարեն—թե, եթե, ե, եին, խընդ-
րեն, որպես, այնպիս, եղեց, ապաքեն, պատուեր, զքեն, ի Նա-
զարեթե և այլն:

զ) «է» գրվում ե փոխանակ «ե»-ի—արէգակն, փէսայ, ցէ-
րեկ, էդաւ, էնսա, էթող, էհար, և այլն:

է) «կ»-ի փոխարեն գրվում ե «գ»—անգեան, մանգունք,
յանգողին, ցանգացան և այլն:

ը) «ուվ» գրվում ե «աւ»-ի փոխարեն—ամօվթ, նոքովք, ար-
տասւովք, համբով, համբովիւ և այլն:

Ուղղագրական այս տարբերվող ձևերն ընդհանուր յերևույթ
չեն: Հին գրչագիրների մեծ մասը պահում են սովորական ուղղա-
գրական ձևերը:

Դժվար ե վորոշել յերկաթագրի գործածության ժամանակը
մեր գրականության մեջ: Նա պարզ ե, վոր սկսում ե V դարից,
բայց վորտեղ ե նրա վերջին սահմանը—այդ գժվար ե ասել: Մեր
մատենադարանում կրօնական-կանոնական բովանդակությամբ
գրչագրեր են հանդիպում մինչև անգամ XIV դարում, այն ժա-
մանակ, յերբ գործ ածվող գրի հիմնական տեսակը բոլորգիրն եր
հանդիսանում: Յերկաթագրի ինչպես և մյուս գրերի ժամանակը
վորոշելիս, հնարավոր ե միայն ասել, թե նրանցից վորը ինչ ժա-
մանակաշրջանում ե գրության հիմնական տեսակ հանդիսանում:
Այդ տեսանկյունով յեթե մենք մոտենալու լինենք հարցի քըն-
նությանը, ապա կարելի յե ասել, վոր բոլորձե յերկաթագիրը
կանոնական-կրօնական գրականության մեջ գրի հիմնական տե-
սակն ե հանդիսացել V դարից մինչև IX դարը, ուղղագիծ յեր-
կաթագիրը—IX դարից մինչև XI դարը, մասն յերկաթագիրը
(պատմագիտական բովանդակություն ունեցող գրականության
մեջ, V—XII դ.դ.):


Ա Յ Մ Է Ա Ճ Գ

Տ Ե Մ Կ Պ Չ Ժ

Զ Բ Հ Լ Պ Ճ Ա Ւ

Յ Ջ Փ Բ Ը Ա Ւ

Նկ. 6.—Բալորձե յերկաթագրի մի շաբաթաներ



Նկ. 7.—1232 թվին գրված յերկաթագրը (Տ 777 թ. 51 է).

Մանր յերկաթագիրը իր գծագրական առանձնահատկություններով շատ ե մոտենում ուղղագիծ յերկաթագրին և փաստորեն նրա փոքրացած տեսակն ե։ Այդ տառերը վորոշ բանասիրների

մոտ կոչվում են միջին մեսրոպյան գիր: Անհրաժեշտ է նշել, վոր այդ գրով են գրված մեզ հասած պատմա-գիտական բովանդակություն ունեցող

գրեթե բոլոր
հնագույն տեքստ-
աերը - թղթի ա-
մենահին ձեռա-
գիրը, Ազաթան-
գեղոսի պատմու-
թյան հնագույն
ընդորինակու-
թյան հատվածը
(IX-X դ.), Խո-
րենացու պատ-
մության II գըլ-
խի գլխացանկը
(X դ.), Յեղիշե-
յի պատմության
պատառիկը (IX
դ. ?) և ուրիշ-
ները: Այդ նույն
տառերով և զըլ-
ված, ինչպես ա-
սել ենք արգեն,
կրօնական - կա-
նոնական գրա-
կանության վո-
րոշ տեքստեր և
հատկապես ավե-
տարանների հա-


շեթ Անդրանիկ
առանձնահատված Երջեն
Հայութ, Ապուրուս Ապահան
կը Մ. Մազման Մամանին
Կայութ Աշոտիան Իշխանակ
Մամիկոնյան Ջենարի
Աթենական Վահագութ
Մամիկոնյան Վահագութ

Նկ. 8.—Մանր յերկաթագիր: Գրված 973 թվին
(=Նիբ թվ) (№ 2684 թ. 245 ա):

մարարատը Այս տառերի գործածությունն, անկասկած, շատ հնեց
ե գալիս: Վ զարի հայկական հարուստ գրականությունը մեր կար-
ծիքով, խոշոր յերկաթագրով բավարարվել չեր կարող և նա պի-
տիքով ածած լիներ նաև գրեթի այս տեսակը, վորը արագ
գրելու և տեղ տնտեսելու տեսակետից ավելի նպատակահար-
գութու եր:

XI—XIII դարերում մեզ հանդիպում են մանր յերկաթագրեց
բոլոր գրերին անցնող գրի վորոշ տեսակները: Այդ գրեթի մի շարք

տառեր արդեն նոր ձև են առնում: «Ա»-ն սկսում է գործ ածվել
«ա» ձևով, «Յ»-«յ», «Մ»-«մ», «Պ»-«պ» և այլն:



Նկ. 9.—XIII դարի անցման ձեռագիր:

Անցման շրջանի հետաքրքիր գրություն ունի ակաղ. Ն. Յ. Մառի ուսումնասիրած Պիշտեքի գերեզմանատանը գտնվող միտապահքարի հայկական արձանագրություն, վորք նա հրատարակել ե «Зап. восточн. отдел. имп. русск. археолог. общ-ва» VIII, 344—349 („Надгробный камень из Семиречии“ վերնագրով): Այստեղ գլխագիր «Ա» տառը սկսել է փոխվել յերեք ճյուղ ունեցող «ա»-ի, բայց դեռ չի կորցրել և յերկաթաղթ վորոշ ձևերը:

Յերկաթագրին հետևում ե բոլորգիրը: Դժվար ե բացատրել նրա անունը—նա բոլորովին ել կլոր չե, այլ քառանկյունի ձևունի, բայց ինչու յե կլոր կոչվում, դժվար ե ասել: Բոլորգիրը նմանվում է մեր ներկա տպագրության մեջ գործածված տառերին: Հաճախ նմանությունն այնքան մեծ ե, վոր վորոշ ձեռագրեր դժվար են տարբերվում տպագրից:



Նկ. 6.— 1272 թվի գրչություն ունեցող բուրգիր (№ 2563 թ. 378):

Յերկաթագրիրը գեղեցկության տեսակետից իր կատարելությանն և հասնում կիլիկյան դպրոցում: Ձեռագրեր կան մեր մատենագրարանում, վորոնց վրա գրիչը տարիներ և աշխատել, ցանակալով գեղեցիկ ու հավասար ընդորինակել ձեռագրիրը:

Բոլորգիրն, ինչպես ասել ենք արդեն, գրության գերիշխող տեսակն և դառնում կիլիկյան դպրոցում, XII դարում: Ճիշտ այս ժամանակին և վերաբերում նրա մասսայական գործածությունը նաև Արևելյան Հայաստանում: Նա մեռում ե մեր ձեռագրերում վորագես գերիշխող տառերի տեսակ մինչև XVII դարը:

XV—XVI դարի բոլորագիր ձեռագրերում մեր սովորական տպագրիր տառաձեռից տարբեր են գրվել «Ճ» և «Ճ» տառերը: «Ճ»-ն գրվում է «Ճ» ձեռվ, իսկ «Ճ»-ն—«Ճ»:

սպառաւական տակածոց ի ըստու բայց նախուածաց պրեդից մաս
քաղաքացի աշխարհու աշխարհու բանի կանուաստեաց
նարուա ու առաս աւ զալի ելեքան եւ պատուածան եղեաւ է
ծովուա նույգու ։ Առաստեա ու պատաքանի պէր ի ըստու առաս
պատուա ու առաստեա ։ Առաստեացու առաս ի բայց մասուուրի ու
աստեա ու առաստեա ։ Առաստեացու բայցու առաս աստեաց առ
աստեա ։ Առաստեացու առ առաս ի ձեռն աստեաց աստեա ։
աստեաց ու էն Առաստեացու գերուաց էն ենի ճախաց
պէն յանձնուա կը ամերցին դամբանան կոչեցւոց որեւաստու և
ու չըրեն ասուուն որի էն երու։ Նարապարզու յար շեմու
ու առ յանձնապատահ պատահ նարկու քայ անձնաներին
ու օրին էն քայ պատահ պատահ պատահ քայ յանձնան
ու առ պատահ պատահ պատահ պատահ քայ պատահ
պատահ պատահ պատահ քայ քայ պատահ յանձնան
ու առ պատահ պատահ պատահ պատահ քայ պատահ յանձնան
ու պատահ պատահ պատահ պատահ պատահ քայ պատահ յանձնան

Նկ. 7. — Կէմիկան տշանի բուրգեր (№ 3082 թերթ 476), գրված է 1267 թ

7. ՆՈՏՐԳԻՐԸ ՅԵՎ ՇԼԱԳԻՐԸ

Նոտր բառի ծագումը հայտնի յէ, — նա առնված է լատինա-
կան notarius բառից, կամ գուցե բյուզանդական ցոտքօցաւից,
վորը նշանակում է նոտարների կամ գպիրների, գրադիրների
գիր։ Ի տարբերություն մյուս հայկական գրերի, գրության այս
տեսակը համեմտարար գրվել է բագականին արագ։

Նոտր գիրը վորոշ տեքստերում գործ է ածվում նաև տպա-
գրության մեջ։ Այս գրի գլխավոր առանձնահատկությունը կա-
յանում է նրանում, վոր նրա տառերը գրվում են շատ մանր և
խոշոր յերւններ չեն տայիտ։ Անհրաժեշտ է նշել, վոր այս տառե-
րով գրված տեքստերն ավելի յեն համառոտվում և համեմտա-
նբար տալիս են գըշական շատ աղավաղութներ։ Պատահում են
ու թէ՛ր այնպիսի գծվարընթերցելի տեքստեր, ուր գրեթե չեն

տարբերվում իրարից «ա»
և «ու», «ա» և «ո» տառե-
րը: Նման տեքստերում նը-
շանք կարգացվում են ըստ
բառի նշանակության:

Շղագրի վրա մենք
յերկար կանգ չենք առնի:
Այդ գիրը չնայած վորոշ
տեքստերում գործ ե ածվել
անգամ XIII—XIV դ. դ. ձե-
ռագրերում, սակայն այդ
շատ հազվագեպ ե և տա-
ռերը բավականաչափ ձեռ-
փոխված են: Նա մասսայա-
կան գործածության մեջ ե
սկսում դրվել միայն XVIII—
XIX դարերում և մնում ե
մինչև մեր որերը:

Բացի նշված հայկա-
կան գրության հիմնական
տեսակներից, հայկական
ձեռագրերում և վիմական
արձանագրության տեքս-
տերում գործ ե ածվում փա-
կագիրը (monogramme):
Դա եյապես հայկական գրի
առանձին տեսակ չե, այլ
վորոշ տառերի միացումը:
Տեքստի ծավալի փոքրու-
թյան հետևանքով իրար հետ
միացած ձևով են գրվում
յերկու կամ ավելի տառեր:
Փակագրերի վորոշ տեսակ-
ները սիստեմատիզացիայի
յի յինթարկված ընկ. կ.
Հաֆադարյանի «Հայկ. գրի սկզբ. տեսակները» աշխատու-
թյան մեջ:

Եթե այս մի մասնաւության մասին
կա առաջարկ ուղարկություն՝ ես
ընթառ ու այնունախառ հայելու պահին
կատար այս առաջարկը առաջին այս
մասնաւության մասին իշխ
թե կայ եսաւ և առաջ մի պահին
հայրական զնություն չուն
ոյ այս Ծանծնի որ, թի եւ եւ ի.
Ես արդ սկսու սպառության
համար անհանդանություն առըն
շանութ համեմ: Իսկ իս անունը
ժաման և եւան սպառուն չուն
ուարա եւան պահան իմաստի
ու ծառաւու առաջ ճանապարհութ
այս այլ մեջ է առանձին գրքի և այլ
բարձրաց նույնիշխա ի գրքի ուր
վարության համար ի մեջ: Այսու
ծառաւու եւանաւանար Ծորին
ի ինքնութեան ի մոյ ոչ խանիքա-
պահութ զնորհեաց ի մի:

Նկ. 8. ԺԷ—ԺԲ. Դ.

Հայկական գրականության մեջ, սկսած հնագույն շրջանից, կատարվել են մեծ չափով հապավումներ։ Հապավված բառերի թիվը համեմատարար ավելի շատ և հատկապես ուշ շրջանում գրված ձեռագրերում։ Վորքան հին և ձեռագիրը, այնքան քիչ են և հապավումները։

Լազարյան կոչված ավետարանում, ինչպես և դրանից առաջ ու դրա ժամանակ գրված տեքստերում, մեղ հանդիպում են հապավված միայն վեց բառ՝ Ած, Յո, Եէմ, Քր, Խեղ և Տր։ Մյուս բոլոր բառերը գրվում են առանց հապավման։

XII—XIII դարերի գրչություն ունեցող ձեռագրերում սկսում են շատանալ հապավված բառերի քանակը։ Ակսում են հապավվել վորոշ բառերի վերջավորությունները, հատկապես «թիւ» վերջավորությամբ (առաջինութիւ, նեղութեն, ազդարարութիւ, բռնութեր և այլն)։ XII—XV դարերից սկսած, հատկապես բոլորգիր և նոտր գրչություն ունեցող ձեռագրերում, հապավումներն սկսում են արդեն մեծ չափերի համանել։ Նոտր գրչություն ունեցող վորոշ ձեռագրեր են պատահում, վորոնց տեքստում կրճատված են գրեթե բոլոր ձայնավոր տառերը («Պոճո վրկնիմք ով սրդք իմստիթե և որք իմյս էք ցնկցելք ուսանել գիտթի արձնցնել ձեզ արհեստ հմրդթե ոպս կնդնի ձյն ի բըի ուսուցչէ»)։

Հատուկ անուններից ամենից շատ հապավվում են հետեւյալ բառերը (տես նկ. 9):

ի՛էլ - իսրաէլ	նահանջ - նահանջ
եղանակ - եղանակ	աղամազ - աղամազ
եղանակ - եղանակ	աղամազ - աղամազ
մահ - մահ	աղամազ - աղամազ
դժուար - դժուար	աղամազ - աղամազ

գրգռ - գրիգռ	աղամազ - աղամազ
աղամազ - աղամազ	աղամազ - աղամազ
պրդն - պարդան	աղամազ - աղամազ
քպի - քապուհ	աղամազ - աղամազ
իրկը - իւրակը	աղամազ - աղամազ
գգկ - գագիկ և այլն	աղամազ - աղամազ

Բոլոր և նոտր գըռություն ունեցող ձեռագրերում հաճախ
հապավվում են հետեւյալ բառերը (տես նկ. 10):

<i>թվ</i>	<i>թվի</i>	- բակուկ
<i>թւ</i>	<i>թմ</i>	- ամենայն
<i>թու</i>	<i>ույ</i>	- որպէս
<i>թգր</i> - թագաւոր	<i>վն</i>	- վասն
<i>թկմ</i> - բակում	<i>ամինի</i>	- ամենինան
<i>կշր</i> - կինւոր	<i>դրծ</i>	- դարչեալ
<i>ըն</i> - ըստ	<i>հնապ</i>	- հանապակ
<i>վիր</i> - վերայ	<i>յոզ</i>	- յառազ
<i>կմ</i> - կամ	<i>վոյ</i>	- վասնորոյ
<i>ինչի</i> - իանչի	<i>պրն</i>	- պարոն
<i>ընդ</i> - ընդ	<i>ը դեմ</i>	- ընդդեմ
<i>նր</i> - նորա	<i>նմ</i>	- նմա
<i>նց</i> - նոցա	<i>ամ, կամ</i>	- ամենայն, զամենայն
<i>բրի</i> - բարերար	<i>բժ</i>	- բժիշկ
<i>ժ՛ն</i> - յաղագու		

Նկ. 10.

Պատահում են բառեր, վորոնք հապավվում են վոչ թե մեծեց, այլ սկզբից, — կրծատվում են նրանց սկզբի ձայնավոր տառերը: Այդպիսի բառերից են՝ (տես նկ. 11):

նը - անօրէի

րկ - օրինակ

մց - ասաց

նի - այնչափ

ղղ - աղաղակ

Նկ. 11.

XVI—XVIII դարերում գրված գրեթե բոլոր ձեռագրերում
հապավում են բառերի վերջագորությունները «թիւն» վերջավո-
րությամբ՝ իր բոլոր ձեռքով (գիտութի, գիտութե, գիտութք):
Հապաված բառի վրա գրվում ե պատիվ: Գործ ածված պա-
տիվը հիմնականում յերեք ձեի յի՝ (յերկաթագիր ձեռագ-
ըերում), և = : Դրանք յերեքն ել դրվում են բառի վրա:

9. ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐԸ

Մազաղաթ դժվար ձեռք բերելու հանգամանքը վաղուց և
ստիպել մարդկանց գրչության մեջ հաճախ կրկնվող բառերը փո-
խարինել պայմանական կարճ նշաններով: Այդ նշանները գրա-
կանության մեջ հայտնի յեն նշանագրեր («գաղափարագրեր»-
այօգրաֆիա) անունով: Գաղափարագրեր են մեզ հանդիպում բո-
լոր ժողովրդների լիզուններով գրված հնագույն ձեռագրերում,
վորոնց թվում և հայկականում: Միջին դարերում հայկական ձե-
ռագրերում գործ ածված գաղափարագրերը հավաքվել են առան-
ձին ցուցակներում: Այս ցուցակները սովորաբար վերնագրված
են լինում «Նշանագիրք իմաստնոց»: Յերեմի նրանք վերնագրը-
ված են լինում նաև «Նշանագիրք», «Բացարարութիւն առաջնոց
գրոց», «Համառատագրութիւն», «Մեկնութիւն նշանագրաց», «Նշա-
նագիրք հայոց և մեկնութիւնք նոցին» և այլն:

Հայկական գաղափարագրերի քանակը շատ մեծ է: Զեռապերում պատահում են «Նշանագիրք իմաստնոց»-ի այնպիսի ցուցակներ, վորոնց մեջ բերված են ավելի քան 300 նշաններ, Գրչության արվեստով զբաղվող հեղինակների համար այս նշանագրերի յուրացումը սովորական մի բան է համարվել: Մեր մատենադարանի թիվ 2371 ձեռագիրը, վորը գրված ե Կաֆայում XIV դարում ու պարունակում ե այն ժամանակ դասավանդվող կարևոր առարկաները, «Նշանագիր իմաստնոց»-ը շարադրված ե վորպես քերականության որդանական մասը:

Գաղափարագրերի մի զգալի մասը իրենց ձեռվ համապատասխանում ե գործածվող բառի նշանակությանը: Այդ նմանությունն այնքան ակնբախ է, վոր վորոշ գիտնականներ յենթադրել են, վոր հայերեն գաղափարագրերը — հայկական հիերոգլիֆներն են: Այդպիսի գաղափարագրերից են, որինակ, հետեւյալները (տես նկ. 12):

❖ - աևկու

■ - ասկրիծան

▷ - լուսին

△ - լժառ

▽ - գաւական

+ - ինաչ

○○ - պղուղ

□ - լնկու

Ⓐ - աթոռ

▽ - իոր

⌒ - թռչուն

◻ - լրապանակ

○ - եղջ

Նկ. 12.

Գաղափարագրերի վորոշ մասը գրվում ե տվյալ բառի առաջին տառով: Այդպիսի գաղափարագրերից են (տես նկ. 13):

Օ	- Ժով	Ա	- Վասն
Ե	- Ժառանգ	Շ	- Ըստ
Ւ	- Խան	Ր	- ԲէՅ
Ո	- Որդես	Մ	- Առաս
Կ	- Զախարիա	Ֆ	- Քերոսիք
Փ	- Վառաւոյն	ԴՋ	- Դաշտապան

Նկ. 13.

Վերջապես, կան այնպիսի գաղափարագրեր, վորոնք իրենց ձևով
բոլորովին չեն համապատասխանում տվյալ բառի նշանակությանը:
Այդպիսի գաղափարագրերից կարելի յի նշել (տես նկ. 14, 15 և 16),

Ճ	- Միզնորդ	Չ	- աղբյուր
Շ	- աշխարհ	Հ	- եկեղեցի
Ծ	- երկինք	Թ	- ամենայն
Չ	- երկիր	Յ	- արևեսդ
Ց	- արեգակ	Դ	- աշուն
Ց	- ուսկի	Ֆ	- պահար
ՑՑ	- ծանապարհ	Օ	- սեղան
ՑՑ	- մարդ		

Նկ. 14.

Օ - ասեման

Ճ - անապաշ

ՕԵ - հարաւ

Կ - կռապաշը

Խ - առևեմուց

ԺՄ - անդասպան

Ւ - հիւսիս

Ք - պարկենչը


ՅՇ - արեւելք

Նկ. 14.

Ձեռագրերում գաղափարագրելը գործ են աշվում իրենց նախորդով և վերջապահությունով։ Որինակ՝ աշխարհ-ի գաղափարագիրը է ո) - ոի, զ ~, յ ~ է, ~ այ, ~ աւ և ալն։ Կամ լուսի գաղափարագիրը (Դ) - Ծի, զ Ը)։

Նկ. 15.

Անհրաժեշտ են նշել, վոր «Նշանագիրք իմաստնոց»-ի մեջ մտնում են վոչ միայն գաղափարազբերը, այլև այն բառերի համառոտագրությունները, վորոնք վերջապահություններում են հապավված։ Բերում ենք այստեղ մեր մատենադարանի № 3177 ձեպագիր «Նշանագիրք իմաստնոց»-ի 2 հջիցն բաղկացած նկարը։



Նկ. 16.— № 3177, 1p.—2m. Ժ. ԴԱՐ?

Մեղ հասած հայկական տեքստերում ծածկագրերն ամենից շատ հանդիպում են ձեռագրերում և արխիվային նյութերում: Ձեռագրերում յեղած ծածկագրերը, մեծ մասամբ, մեկնություններ են (բանալիներ այս կամ այն ծածկագրության տեքստը կարդալու համար), իսկ արխիվում, ընդհակառակը, գլուխավորապես ծածկագիր տեքստեր են: Այս մասամբ պիտի բացատրել նրանով, վոր ճնում սովորաբար ծածկագիր գրել են նաև մակները և գրությունները, վորոնք մեծ մասամբ մեղ չեն հասել: Մեղ հասած ծածկագիր նամակները և գրությունները XVIII—XIX դարերից են, իսկ այդ շրջանին վերաբերող նյութերը գտնվում են արխիվներում:

Ծածկագրերի շարքն ենք մենք դասում վնչ միայն այն տեքստերը, վորոնք գրվել են տարբեր նշանագրերով, այլև նրանք, վորոնք սովորական հայերեն տառերով և բառերով վորեւել ծածուկ իմաստ են հայտնում: Ծածկագրության այս վերջին տեսակն ամենից շատ գործ են ածել հայկական գրիչները: Զեռագիրն ընդուրինակող գրիչն իր հիշատակարանում հաճախ ծածկագիր և հայտնում իր անունը կամ գրչության թվականը: Այսպես՝ ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 4163 ձեռագրի գրիչն իր անունը հայտնում և հետեւյալ վոտանավոր հիշատակարանում՝

«Եւ անպիտան գծող սորին,
Որ վեց տառիւ անունս կոչին՝
Գիմն առաջին ու ըէն վերջին,
Որ համարով վերաբերին՝
Տասը հազար բոլորովին,
Եւ վեց հարիւր քսան և վեցին,
Որք միտս ունին՝ նա հաւանին,
Եւ որք չունին՝ նա շվարին»:

Դրչի անունը՝ Գրիգոր և «Գառն բառի առջևում, «ըս-ն վերջում և անվան տառերն ըստ իրենց թվական նշանակության հավասար և տասը հազար վեց հարյուր քսան և վեցի: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի մի այլ ձեռագրում (թիվ 373) ընդուրինակող գրիչը ծածկագրով և հայտնում իր ձեռագրերի գրչության թվականը.

«Յինէն ընծայ այս քեզ եղբայր,
Մերոյ նախնեացս վէտ և ճառ,

*Մարտիրոսէ յոգնաթշուառ,
Շրջաբերեալ թիւս է Ծիծառ» (Թերթ 373):*

Ծիծառ թվականը հավասար է 1672-ի [$\delta(50) + \iota(20) + \delta(50) + \omega(1) + \eta(1000)$] + 551 = 1672-ի:

Արիստակես Սեբաստացին իր ընդորինակած ձեռագրի գըրչության թվականը տալիս և հետեւյալ ծածկագիր հիշատակարանում. «...զաղափարեցի (ձեռագիրս) ի թուականութեան հայոց մեծաց երկ քառասնից տասանց և եռակի քսանից, նիղակ թուով յաւելից»: Զեռագիրը, ըստ այդ հիշատակարանի ծածկագրության, ընդորինակած և 1411 թվին — [$(2 \times 40) \times 10 + (3 \times 20) + 1$] + 551 = 1411 թ.:

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 1864 ձեռագրի հիշատակագիրը իր գըրած ձեռագրի թվականն և համարում «Յանէ զի եկայ», այսինքն՝ $\delta(300) + \omega(1) + \eta(400) + \iota(7) + \eta(6) + \iota(20)$ $\iota(5) + \iota(60) + \omega(1) + \eta(300) + 551 = 1651$ թվ.:

XVII դարի հայ գրիչներից նազարեթ անունով մեկն իր վոտանափորի գրչության թվականը, հայտնում և թե՛—«Եղէ Յակոբ»-ն ե՝

*«Եւ թուականս ետի տուփ,
թիւն ծածկեալ գրով ամփոփ,
այս թուականն յետ գիրն հուպ,
ևս թուականն յեղէ Յակոբ»:*


$\iota(5) + \eta(90) + \iota(7) + \delta(300) + \omega(1) + \iota(60) + \eta(600) + \tau(2) + 551 = 1616$ թվ.»

Զեռագրի հիշատակարաններում պատահում են ծածկագիր Ձեռագրի ավելի պարզ տեսակներ: Այսպես՝ ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 3024 ձեռագրի հիշատակարանում ասված և. տեսակների նեննծծծեղգից: Ցեթեւ մենք ընդգծված տառեւ «Գրեցաւ ի թիւս նեննծծծեղգից: Ցեթեւ մենք ընդգծված տառեւ թվական գումարը տալու լինենք, կստացվի 1687 ($\iota(400) + \tau(100) + \delta(100) + \delta(50) + \delta(50) + \iota(10) + \iota(10) + \iota(5) + \eta(400) + \delta(100) + \iota(3) + 551 = 1687$):

Անհամեմատ դժվար և կարդալ այլ նշանագրերով, ինչպես և հայերեն նշանագրերով, բայց հնչնական այլ նշանակությամբ գըրչայի լրանց կարդալու համար անպայման պիշտած ծածկագրությունը, Նրանց կարդալու համար անպայման պիշտած ծածկագրությունը, Նրանց մեկնությունը): Ծածկագրության տիւ ունենալ բանալի (նրանց մեկնությունը): Ծածկագրության տիւ տեսակները բավականաշատ զանազան են: Նրանց տեսակայի տեսակները բանակը, ըստ նախնական ուսումնասիրության, 40-ից անցների քանակը, ըստ նախնական ուսումնասիրության, 40-ից անց-

Նում ե: Ծածկագրության այս տեսակների մեծ մասի մեկնությունները գտնվում են հայերեն ձեռագրերում: Պարզվում է, վործածկագրությունը, մյուս առարկաների հետ միասին, դասավանդվել է հին հայկական դպրոցներում: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 1869 ձեռագրում, վորոն ընդորինակված է 1585 թ. Յեղագործի Անդրեաս գրչի կողմից, տեղավորած է մի այլրենարան՝ «Գիրք տղայ կարգացնելու է» վերնագրով: Այս այլրենարանից յերեսում է, վործակերտը տառերն ու թվերը սովորելուց հետո պարտավոր է սովորել նաև ծածկագրության մի քանի տեսակը: Հայկական ծածկագրության այս տեսակների վերաբերյալ մնդհանուր գաղափար կազմելու համար մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրանց մի քանիսի վրա:—

1. Երջագիր:— Սովորական հայերեն գրերն են, միայն գլըրգում են շուրջ տված ձևով: Պահում են իրենց սովորական հնչնական նշանակությունը: Այս ծածկագրով գրված տեքստերը կարդալու համար անհրաժեշտ են նրանց առջելը պահել հայելին, վորը շուրջ և տալիս ուղիղ ձևի (տես նկ. 17):



Նկ. 17.— (№ 1869 թեր 395 ա, Յեղագիր, Անդրեաս 1585 թ.):

2. Աղվանից գիր:— Դարձյալ հայկական նշանագրերն են, գծագրական զգալի փոփոխություններով: Վորոշ տառերում այդ փոփոխությունն այնքան մեծ է, վոր առաջին պահին դժվար է ճանաչել: Ենդեւ են բանասիրության մեջ մարդիկ, վորոնք հենվելով վերնագրի վրա այս ծածկագրերը համարել են աղվանական նշանագրեր: Սակայն պարզվում է, վոր նախնական վերնագրերը յեղեւ ե գոչ թե «աղվանից գիր», այլ «աղավնագիր», վորը ժողովը գական նշանակությամբ հասկացվել է ծածկագիր: Ծածկագրերի այս տեսակը չպիտի շփոթել ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 7117 ձեռագրում յեղած «աղուանից գրի» հետ, վորը հրատարակել են պրոֆ. Շանիձեն և դոց. Արուլաձեն իրենց՝ «Նոր հայտնաբերված աղվանից այրութենը» աշխատության մեջ: Վերջինս

ծածկագրություն չե և հիմքեր կան յենթագրելու, վոր նա կարող ե և լինել աղվանից նշանագրերը: Ծածկագիր հանդիսացող «աղվանից գրերը» ավելի ճիշտ—աղաֆսագրերը, ինչպես ասել ենք վերևում, պահում են հայկական նշանագրերի տառաձեռքը (տես նկ. 18):

Համեմագիր „աղվանեց գրի նմուշը հետևյալն է:”
«Նիս ե աղուանեց այբուբենն

— թ: թ: թ: թ: թ: թ: թ:
 թ: ժ: ժ: լ: լ: թ: թ:
 լ: շ: ՛ թ: թ: թ: թ:
 թ: պ: պ: թ: թ: թ:
 թ: զ: զ: թ: թ: թ:
 թ: օ: օ: թ: թ: թ:

նկ. 18.—(№ 3124 թեր 11 թ. XVIII դ.)

3. Գծավորվկեագրեր:— Հնում սա ամենաշատ էդործածական ծածկագիրն ե հանդիսացել: Ուղղագիծ սյուների և նրանց մոտ

ա	թ	գ	դ	ե	ւ	է	ւ	թ
թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ	թ
ժ	հ	լ	ի	ձ	ւ	ի	զ	շ
լ	լ	լ	լ	լ	լ	լ	լ	լ
ւ	ս	ժ	ւ	զ	ն	չ	ա	զ
ն	ս	վ	զ	ր	յ	ւ	փ	ի

նկ. 19.—(Հայաս, Պետ. Կենտր. ձեռագ. Մատենադարան № 1869 թերթ 329 ա՝ գրված 1585 թ. Անդրեաս գրի, Յեղակիա):

պրված կետերի քանակով վորոշվում ե նրա համապատասխան տառանիշը: «Ա»-ից մինչև «Ժ»-ն դրվում ե մի գծով, «Ժ»-ից—«Ճ»-ն՝ յերկու գծով, «Ճ»-ից—«Շ»-ն՝ յերեք գծով, իսկ «Շ»-ից հետո՝ չորս գծով: Հիմն Պետ. մատենագրաբանի ձեռագրերում պատճենում են այսպիսի ընդորինակություններ, ուր գրիչն իր անունը այս ծածկագրով ե հայտնում: Այսպես՝ թիվ 2001 ձեռագրում (թերթ 139 թ.), ընդորինակված XIV դարում, Գրեգորիս անունով մի գրիչ իր անունը հայտնում ե այս ծածկագրով: Գծավոր կետագրերի այբուբենը կազմված ե հետեւյալ նշանագրերից (տես նկ. 19):

Այդ նույն ծածկագրով մի հիշատակություն և գրված նախակին Հազարյան ձեմարանին պատկանող մի գրչագրում («Յիշատակ» է քարողղիրքս Սրապիոն վարդապետին») և ներքեւում տված և այսպիսի մի վոտանավոր՝

«Եթէ դպիր ես նայ կարդայ,
Զէ նա վզիդ տուր և հազայ,
Մի մեղադրիր ինձ ի կամայ,
Բանս արուեստիւ է միդ արայ»:

(Հրատ. Ն. Մառի—Հանդ. ամսա 1892 թ., եջ 52):

Ա. Գավազանագրեւ:— Շատ քիչ են տարբերվում գծավոր կետագրերից, Տարբերաթյունը զծիկների մեջ և—այստեղ զծերի փոխարքեն դրվում են զանազան տեսակի գավազանածեւ ցպիկներ, ուստի և կոչվում ե գավազանագիր: «Ա»-ից մինչև «Ժ»-ն գործ ե



Նկ. 20.— (№ 2001, թերթ 223, գրիչը—Թոմաս, XIV դար):

ածվում մի կետ, «Ճ»-ից մինչև «Ճ»-ն՝ յերկու կետ, «Ճ»-ից—«Ռ»-ն՝ յերեք կետ, «Ռ»-ից հետո՝ չորս կետ։ Այս ծածկագրի այրութենը գրվում և հետեւյալ ձևով (տես նկ. 20):

5. Յելլայրագրեր։— Ծածկագրերի այս տեսակը կոչվում է նաև փոխարինագրեր, վարովհետև այրութենի մի տառը իր հընչ-նական նշանակությամբ փոխարինում եւ մյուսին։ Այրութենը բա-ժանվում է յերկու մասի—«Ճ»-ից մինչև «Ղ» և «Ճ»-ից մինչև «Ք», և համարական կարգով դրվում իրար զուգահեռ՝ փոխարինելով իրար իրենց հնչնական նշանակությամբ (տես նկ. 21):

ա	բ	գ	դ	ե	շ	է	ը	ր
Ճ	Ժ	Ջ	Ն	Չ	Ռ	Շ	Կ	Ջ
Ժ	Ի	Լ	Խ	Շ	Կ	Դ	Ճ	Ղ
Ռ	Ա	Վ	Մ	Ր	Ց	Լ	Ւ	Ք

Նկ. 21.

«Աղիւսակ» այսպիս իմացիր. այս որ պիտանայ ճէ. գրէ, ճէ որ պիտանայ այր. գրէ; Ժէ որ պիտանայ, ըռայ գրէ. ըռայ որ պիտանայ. Ժէ. գրէ և այլն ի կարգին դնայ։

6. Միատար ծածկագրեր։— Վերցվում եւ այս ծածկագրության մեջ «ա» տառը և նրա վերկից կամ ներքեկից դնելով կե-թեր, պատիվներ և կլոր նշաններ տալիս են իրենց ցանկացած տառի հնչյունը (տես նկ. 22):

Ծածկագրի այս տեսակն ամենից քիչ եւ զործածական։ Ծածկագրի այս տեսակն ամենից քիչ եւ զործածական։ Տառապական և գորկեր գծերի մոռացվի գրվել կամ ճիշտ չգրվի՝ նրա-նով գրված տեքստն անհնար կլինի կարդալ։

7. Խմբավոր փոխարինագրեր։— Ծածկագրության այս տեսա-կը փոխարինագրերի ավելի բարդացված տեսակն է։ Այրութենի գր փոխարինագրերի ավելի բարդացված տեսակն է։ Այրութենի առանձին տառերը փոխարինվում են հայկական այրութենի յեր-կու, յերեք այլ տառերով։ Մի տառով միայն գրվում եւ «ա» տա-ռը (տես նկ. 23):

8. Ծածկագրի բվականեներ։— Ծածկագրության այս տեսակի բանագին պահված եւ Անդրիս գրչի վերև հիշատակված դասա-գրքում։ Սա զործ եւ ածվել միայն թվականների համար։ Իր բո-վանդակությամբ ծածկագրության այս տեսակը շատ պարզ եւ:

Մեկից մինչև ինսը գրվում է հայկական այբուբենի տառերով՝ յուրեց սովորական թվական նշանակությամբ, տասից մինչև հարյուրը գրվում է «ա»-ից—«ժ» տառերով՝ մի զերո ավելացրած, հարյուրից—հազարը՝ նույն տառերը յերկու զերոյով, և վերջապես, հազարից—ութ հազարը՝ դարձյալ նույն տառերը՝ յերեք զերոյով:

Ա	Ա	Ա	Ա	Ա
ամենակալ	արժանաւոր	ապահով	անդադար	աղօր
Ա	Ա	Ա	Ա	Ա
ամբարիշչոր	ամբարփաւան	ապաշաւ	անըսգամ	անիրաւ
Ա	Ա	Ա	Ա	Ա
անոխակալ	անուան	արշակնա	ամբարհաւաճ	ակամա
Ա	Ա	Ա	Ա	Ա
անդրանիկ	արեգակն	ապրենցոյ	այնպէս	այսպէս
Ա	Ա	Ա	Ա	Ա
անդամալութ	աղջամուղջ	ապականացոյ	այնորիկ	այսորիկ
Ա	Ա	Ա	Ա	Ա
արժանի	անշրնե	արժայ	ահեղ	անարժան

Նկ. 22.—Այս է նշնդիբ. № 1465 թերթ 13 ա—29 թ. 1628 (?) նազար գրչի (նույն չեռագրում այս ծածկագրով գրված և Հովհաննես Վասկերերանի Հայվատամբըշ-ը)

Սրանցով, իհարկե. չեն վերջանում հայկական մատենագրության մեջ գործ ածված ծածկագրության տեսակները: Արևիվում կան Աշտարակեցու և այլ անձնագորությունների մի շարք ծածկագիր նամակները, վորոնց հետ ծանոթանալ ցանկացողը պիտի կարդա այդ տեքստերի վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրություններ:

Ի միջի այլոց, մենք կանգ չառանք նաև հայկական բժշկաւ-

բաններում գործ ածվող ծածկագրերի վրա: Խնչպես վոր այժմ առանձին դեղերի համար ուցեալտներ են գրվում լատիններեն լեզվով, վորը հասկանալի չի մասնագետ չեղող անձնագրության համար, այնպես ել հնում առանձին դեղերի ուցեալտները հաճախ գրում ենին ծածկագիր, վորպեսդի հասկանալի չլինի ամեն մի սովորական ընթերցողի համար: Նման ձեռվ ծածկագիր տեքստնը ևն պատահում ալքիմիական բովանդակություն ունեցող ձեռագրերում:

11. ԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ:

Մեր ներկա թվերի գործածությունը հայկական գրության մեջ նոր է: Նա XVII-XVIII դարերից գենը չի անցնում: Հայ մատենագրության մեջ դրանից առաջ վորպես թվեր գործ են ածվել հայկական տառերը: Համարական կարգով հայկական այրուբնի «ա»-ից միշկ «ժ» տառը հանդիսացել են միավորներ, «ժ»-ից մինչև «ճ»-ն՝ տասնագորներ, «ճ»-ից մինչև «ռ»-ն՝ հարյուրավորներ և «ռ»-ից հետո յեղող տառերը՝ հազարավորներ: Հայկական այբուբենի առանձին տառերը մեր մատենագրության մեջ գործ են ածված հետեւյալ նշանակությամբ:—

$w=1$	$\delta=10$	$\alpha=100$	$n=1000$
$r=2$	$b=20$	$m=200$	$o=2000$
$q=3$	$l=30$	$j=300$	$q=3000$
$t=4$	$l=40$	$u=400$	$w=4000$
$h=5$	$\delta=50$	$z=500$	$r=5000$
$q=6$	$l=60$	$n=600$	$g=6000$
$\xi=7$	$\zeta=70$	$\xi=700$	$z=7000$
$r=8$	$\delta=80$	$u=800$	$q=8000$
$\theta=9$	$\eta=90$	$\varrho=900$	$\varphi=9000$

1624 թվականը հայկական տառերով գրվում երթուղարք, 9978-ը՝ ՔԶՀ, 3282-ը՝ ՎՄՁԲ, 1999-ը՝ ՌԶԴԹ և այլն:

Զերոյի համար առանձին նշան գոյություն չի ունեցել: Թվերի մեջ կամ վերջում պահանջվող դերոն հասկացվել են նախորդ թվական նշանակության հետ միասին: Այսպիսի 1080 թվատափ թվական նշանակության համար կանոնավոր է 8002-ը՝ ՓԲ, 1608-ը՝ ՌՈԸ և այլն:

Հազարավորներից բարձր թվերը հաշվվել են բյուրերով: Համարվել տասը հազարը: Հաշվութիւնը հեշտացնելու համար բյուրի համար գործ են ածել և նշանը: Դա հնարավորությունը առանձին է համարվել տառը հազարը: Հաշվութիւնը հեշտացնելու համար բյուրի համար գործ են ածել և նշանը:

թյուն և ստեղծել առանց դժվարության միլիոնների, տասնյակ
միլիոնների հաշիվները անել: Բյուբի (չորս զերոյի) այդ նշանը
բազմաթիվ տեղերում գործածված ենք տեսնում VII դարի մա-
թեմատիկոս (համարող) Անանիա Շիրակացու կողմբց՝ իր նորե-
ըս մեր մատենադարանում հայտնաբերված թվաբանության դա-
սագրքում: Բյուբի համար գործ ածված այդ նշանը հայկական
տառի վրա գնելիս, չորս զերոյով մեծանում և նրա թվական նշա-
նակությունը: Այդ հաշվով հայկական այրուբենի տառերը ստա-
նում են հետեւյալ թվական նշանակությունը:—

ω' = 10,000	δ' = 100,000	λ' = 1 միլիոն	n' = 10 միլիոն
ρ' = 20,000	τ' = 200,000	ς' = 2 — —	ω' = 20 — —
ϱ' = 30,000	ζ' = 300,000	ς' = 3 — —	ϱ' = 30 — —
τ' = 40,000	ν' = 400,000	ζ' = 4 — —	τ' = 40 — —
ξ' = 50,000	ς' = 500,000	γ' = 5 — —	ρ' = 50 — —
ψ' = 60,000	ς' = 600,000	η' = 6 — —	ψ' = 60 — —
ξ' = 70,000	η' = 700,000	ζ' = 7 — —	ζ' = 70 — —
ζ' = 80,000	ς' = 800,000	η' = 8 — —	φ' = 80 — —
μ' = 90,000	ζ' = 900,000	η' = 9 — —	μ' = 90 — —

Որինակ՝ 6,874 598-ը գրվել է հայկ. տառանիշներով
Ո՞Չ Ե՞Ր ՌԻԸ, 80 024-ը - ը՞Դ. 1,001,000-ը - ո՞Ւ և այլն:

Նկ. 23.

Թվական նշանակությամբ գործ ածված տառերը մյուսնե-
րից տարբերելու համար, ձեռագրերում, ինչպես և վիմական ար-
ձանադրությունների մեջ, սկզբից և վերջից զրել են միջակետ կամ
վերջակետ: Բացի այս, թվական նշանակությամբ գործ ածված
տառերի վրա գրվել են պատճեններ: Որինակ՝ «Յամի: ՈՒՅԶԹ:
արեգ ամսոյ: ԽԲ: լուսինն խաւարեցաւ», «ի թուականութեան
հայոց: ՈՒՅԶԹ: եղև մահ տարածած», «Արշակ թագաւորեաց ԽԲ:
ամ և Հ. ամիս» և այլն:

Հայկական վրաու ձեռագրերում, հատկապես նոտր գրչություն
ունեցող ձեռագրերում, պատահում են զեպքեր, յերբ խախտվում
են թվական գործածվելու ներկա կանոնները: Այսպես, յերբեմն
հաղարավոր կամ հարյուրավոր թվերի համար գործածվում են
վոչ թե տվյալ թվանշանի համապատասխան տառանիշը, այլ հա-

զարավոր կամ հարյուրավոր թվանիշը միավոր թվանիշով: Որինակ՝ 3600-ը գրվում ե վոչ թե սովորականի նման վլ՛, այլ՝ ԳՌԶՃ, կամ 585—վոչ թե ՇՁԵ, այլ՝ ԵՃՁԵ և այլն. կան զեպքեր յերբ «Ժ»-ից հետո յեղած տառերը դառնում են վոչ թե տասնամբուներ, այլ մնում են միավոր թվանշանում: Այդ դեպքում «Հ»-ն վոչ թե 20-ի յե հավասար, այլ՝ 11-ի, «Լ»-ն վոչ թե 30-ի, այլ՝ 12-ի (այդպես ե Մթէ թագուհու կոչված ձեռագրում): XVII և XVIII դարերում գրված նոտրգիր ձեռագրերում պատճենում են դեպքեր, յերբ հայկական թվանիշ տառերի հետ սկսում են գործ ածել զերոն (որինակ՝ Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրության մեջ): Այստեղ 1680-ը գրվել ե ՌՈԶՕ. 1025-ը՝ ՌՕՒԵ. ձեռվ:

Հայկական գրչագրերում մեզ հանդիպում են նաև մի համարիչ ունեցող պարզ կոտորակների գործածություն: Նման կոտորակներ մեզ հանդիպում են Շիրակացու թվարանության խընդուագրքում և Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի մեջ: Կոտորակի նշանակությամբ գործածված թվանշանի վրա դրվում ե թափի նման մի նշան (շատ նման բյուրի նշանին) այն տարբերությամբ, վոր այդ նշանը դրվում ե վոչ թե տառի հետևեց, այլ առջևից: Շիրակացու թվարանության խնդիրներից մեկի պատճենագիրը: Շիրակացու թվարանության խնդիրներից մեկի պատճենագիրը, — վորը հավասար ե յեղել 7³/₁₁-ի, — գրվել ե — կ, / Ե / Կ / Խ / Դ / Յ, մի ուրիշը՝ 9¹/₁₁-ը. գրվել ե թ, / Ժ Ա: Կեսի համար յերբեմն գործ ածել լատինական և տառի նման մի նշան: «Յեռոն...ծայրն ի են ածել լատինական առաւել քան զայլ երկիր՝ մասունաներքոյ գայ ի յովկիանոս առաւել քան զայլ երկիր՝ մասունաներիս և օ, որ լինի ասղարէզք հազար եւթն հարիւր և յիսուն»:

Տարեթիվը հայկական գրության մեջ գործ ե ածվել հայկական թվականով, վորը, խնչվես հայտնի յե, 551-ով պակաս ե մեր ներկա գործածվող թվականից: Հայկական թվականից մեր մաս հաշվելու համար անհրաժեշտ ե ավելացնել 551 թիվ: Թվականը հաշվելու համար անհրաժեշտ ե ավելացնել 551 թիվ: Այսպես՝ ՌՃԻԴ հայկական թվականը հավասար ե (1124+551) Այսպես՝ ՌՃԻԴ հայկական թվականը հավասար ե 981-ի (430+551), ՌԴ թվա-1675-ի, ՆԼ թվականը հավասար ե 1155 (604+551) և այլն:

Հայկական մատենագրության մեջ ամիսների անունները գործ են ածում վոչ թե ներկա ամիսներով, այլ հայկականով, վորը տարեկան 13-ն ե: Այդ ամիսներից 12-ն ունեցել են 30-ական որ, իսկ վերջինը՝ 5 որ:

1. Նաւառարդ՝ 30 որ,

2. Հոռի՝ 30 որ,

3. Սահմի՝ 30 որ,

4. Տըէ — 30 որ,
5. Քաղոց — 30 որ,
6. Արաց — 30 որ,
7. Մեհեկի — 30 որ,
8. Արեգ — 30 որ,
9. Ահեկի — 30 որ,
10. Մարերի — 30 որ,
11. Մարգաց — 30 որ,
12. Հրոտից — 30 որ,
13. Աւելիաց — 5 որ:

XIII դարում Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարը կազմվելուց հետո սկսվեց արդեն կատարվել տոմարական ավելի ճիշտ հաշիվ՝ հայկական ամսաթվերը հռոմեականին համապատասխանելու տեսակետից։ Հայկական նոր տարվա սկիզբը (անշարժ տոմարի կազմելուց հետո) հավասար եւ մեր ներկա ոգոստոսի 1-ին (հին տոմարով)։ Մեր ներկա հաշվով նոր տարվա սկիզբը (հուլյան տոմարով) հավասար եւ հայկական քաղոց տմսի 24-ին։

12. ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՐԱԳՐԵՐՈՒՄ

Ամենաքիչ կետադրություն ունեցող տեքստերը—բոլորաձեյիրկաթագրով գրված տեքստերն են։ Այնտեղ մեղ պատահում են միայն միջակետը, պատիվը և չակերպը։ Ուրիշ կետեր չկան այնտեղ։ Միջակետն այդ տեքստերում գործ եւ ածվում նաև վերջակետի նշանակությամբ և դրվում եւ սովորաբար տողից վերև։ Հնագույն տեքստերում նա վոչ թե կլոր ե, այլ ունի քառանկյունի ձև։ (■) Չակերպը գործ եւ ածվում ուրիշի խոսքերը բերելու ժամանակ, ըստ վորում, նա դրվում ե վոչ թե տեքստի առջելից և վերջից միայն, ինչպես այժմ, այլ բերված տեքստի բոլոր տողերի միայն առջելից։ Նա ունի լատինական և տառի ձևը։ Պատիվը գործ եւ ածվում հապալվումների ժամանակ, իսկ բոլոր ձեւ յերկաթագիր գրչագրերում, ինչպես ասել ենք արդեն, հապալված են լինում միայն վեց բառ—Յո, Ած, Բո, Եղմ, Իւղ և Տը։ Բոլորաձեյիրկաթագրով գրված տեքստերը չունեն վերջակետ (կրիստուկետ), հարցական նշան, ստորակետ և հետազայում գործ ածվող մյուս կետերը։

Մոտավորապես տասներորդ դարից հետո գրված ձեռագրերում սկսվում ե արդեն ամենուրեք գործ ածվել վերջակետը։ Հնա-

գույն գրչագրերի մեծ մասում նա պահպանվում և միջակետի քառանկյունի ձևով (■): Դրչագրերում մեկ մեկ պատճենում են վերջակետեր ասորականի նման յերեք կետով (••): Վորոշ ձեռագրերում վերջին կետը դրվում և կոր գծով (~): XII, XIII ևուշ դարերի ձեռագրերում տեքստերի ավարտական նշանը դրվում և յերկու կետերով և յերկու, յերեք և ավելի գծիկներով (~~~ :~~~ :~~~): Մոտավորապես XII դարից հետո սկսվում ե գործ ածվել ստորակետը և տառարաժանման նշանը:

Մինչև XIII դ. գրված ձեռագրերում գրեթե մեղ չեն հանդիպում գործածված տողադարձման նշանը — յենթամնան: Մեզ հայտնի հասպույն գրչագրերից մեկը, ուր հանդիպում ենք տողադարձման նշանի — Մոլսես Կաղանկատվացու 1289 թ. ընդորինակությունն և: Տողադարձման նշանը դրվում է վոչ թե վերջացող տողի վրա, այլ տողի վերելում:

Սկսած մոտավորապես XI-
XII դարերի գրչագրերից վեր-
նագրերը տեքստից բաժանելու
համար սկսում են վերնագրերն
ընդգծել ընդգծումը կատարվում
և վոչ թե գծով, այլ կետերով:
Մեղ հայտնի յեն կետերով ընդ-

նկ. 24.

գծելու հետեւյալ ձևերը՝
Հնագույն տեքստերում այս կետերն ու գծիկները դրվում
են վերնագրի վերելից, իսկ ուշ ըլջանում այն տեղափոխում են
ներքեւ:


Բութի գործածությունը յերեսում և XII—XIII դարերում:
Կիլիյան գրչությամբ կան սի շարք ձեռագրեր, վորտեղ գործ
և ածվել բութը: Նա չի տարբերվում իր ներկա ձևից և դրվել և
տողից վերև:

Բոլորգիր ձեռագրերում (մոտավորապես XII դարից) սկս-
վում են նաև թափի գործածությունը ✕/ ✖ ձևով: Նա դրվում ե բա-
վարական գրչությամբ կան սի շարք ձեռագրեր, վորտեղ գործ
և դեպքում (Իւշանէ, հարազատաւշ, ի թշուականութեան հայոց և
այլն): Ավելի ուշ ըլջանում «աւ»-ի վրա դրվում ե ∞ նշան «օ»
հնչելու համար:

Մոտավորապես XIII—XIV դարերում և դրանից հետո գըր-
ված ձեռագրերում հանդիպում են այժմ մեղ հայտնի և գոր-
ծածվող գրեթե բոլոր կետերը: Վորոշ հայ քերականներ և գրչու-

թյան արվեստի կուրօ կազմող հեղինակներ, իրենց աշխատությունների մեջ սկսում են հատուկ գլուխներ հատկացնել կետադրությանը, աշխատում են վորոշ կանոնների յենթարկել դրանց կետադրությանը վերաբերող գլուխները նրանց այդ աշխատությունների մեջ վերնագրված են լինում՝ «վասն ոլորակի», «վասն կէտի», «վասն վերծանութեան»:

Կետադրության գործածությունը միծ դարձացման և հասնում հատկապես այն տեքստերում, վորոնք յերգեցողության համար են գրված—տաղարաններում, խաղգրքերում, գանձարաններում, շարականներում և այլն։ Այստեղ արդեն նրանք սկսում են ստանալ այլ նշանակություն, նրանք սկսում են նոտաների զերկատը բառի վրա գրված գծի բարձրացման կամ յերկարացման համաձայն ցանկացել և ասել նրա հեղինակը, վոր անհրաժեշտ և բարձրացնել յերկարացնել ձայնը և այն։



Նկ. 25.—97. ԵԶՄ. № 759. 67 ս 1278 թ.

Կետադրել Բառի վրա գրված գծի բարձրացման կամ յերկարացման համաձայն ցանկացել յեղինակը, վոր անհրաժեշտ և բարձրացնել յերկարացնել ձայնը և այն։

Հետաքրքիր հիշատակություն ունի հայկական կետադրության վերպերյալ Յեսայի Նշեցին։ Նա հետայի ասում, «Այս լինի ըստ տան արուեստի առողջանութեանցն, որպէս և եղեալ է ըստ զանազան որակացն ձևացուցների լուսակացների մասին» (1), զարդարութիւնն զեշտ (2), բութ (3), պարոյկ (4), յերկար (5), սուղ (6), թաւ (7), սոսկ (8),

ապաթարց (9), ենթամնայ (10), ստորատ (11), իսկ ըստ արոհութեան որ է ըստ որոշութեան՝ որ զատէ և ընտրէ զբան ի բանէ

և գտուն ի տանէ, և ոչ ընդ միմեանս խառնելով յընթեռնուշն
զայլեայլ խորհուրդն»:

XVII դարում գրված վորոշ ձեռագրերում ավարտական կետը
նշանակվում է չորս թեք գծիկներով (‘/’): Տեքստերում մո-
ւացված նախադասությունները լուսանցքում լրացնելիս գործ են
ածվում ի Բ° այս նշանները: Նոր ծագում ունի (°) հարցա-
կան նշանը: Հունական աղղեցության տակ, սկսած հնագույն շըր-
ջանից, գործ են ածվում յերկու տեսակ շեղ գծիկներ՝ բառերի
վրա, վորոնց նպատակը ձայնավորների յերկարացումն ե—(／＼):
Յերբեմն պատահում են տեքստեր, վորոնց բառերի մեծ մասի
վրա դրված են լինում այդ նշանները:

Կետագրության նշանները իրենց վողջ բաղմազանությամբ
խոշոր զարգացման են հասնում շարականներում և խաղգրքե-
րում: Այստեղ նրանք փաստորեն սկսում են նոտանների գեր-
կատարել:

13. ՍԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական մանրանկարչությունը պալեոգրաֆիայի մեջ ներ-
կա կուրսում հետաքրքրում է միայն այն չափով, վոր չափով նա
ոգնում է մեղ պարզելու այս կամ այն ձեռագրի գրչության
վայրը, գրելու ժամանակը և վորոշ գեղագրում նաև՝ հեղինակը: Հայ-
կական մանրանկարչության յուրաքանչյուր դպրոց, ինչպես հայ-
տնի յե, ունի իր վորոշ թե այս ձեռագիրն այսինչ դպրոցի գործ
վրա կարելի յե ասելի թե այս ձեռագիրն այսինչ դպրոցի գործ
ե, նկարված և այսինչ վայրում, այսինչ ժամանակ: Այդ առանձ-
նահատկություններն ել հենց ոգնում են մեղ ձեռագրերի ճիշտ
ընութագրման գործում: Այդ ոգնությունը մեծ և հատկապես
հայկական զարդանկարված այն ձեռագրերի համար, վորոնք չու-
նեն ճիշտատակարան:

Մանրանկարչությունը, պետք է խստովաներ հայկական
արվեստի պատմության ամենաշշշակված շրջաններից մեկն եւ
վեհ միայն մենք մինչև այժմ չունենք առանձին նկարիչների
գործերի գիտական խորն ուսումնասիրությունը, այլև չի ճշշտ-
ված թե Հայաստանում ինչ ինչ շկոլաներ են գոյություն ունե-
ված արվագրականի միայն նիդանի շկոլայի մասին և մա-
սմբ—կիլիկիայի, համարելով վերջինս «արքունականակադե-
միական», վորն արմատորեն սիսալ և շփոթվում ե այստեղ ար-
քունիքի պատվիրատու թագավորը կամ այլ ֆեոդալը—աշխա-

տանքն անմիջապես կատարող, ստեղծագործող հասարակ նկարիչ է հետ։ Մեզ մոտ, փաստորեն, մինչև այժմ ստվերի տակ են մնացել մանրանկարչական որիգինալ ու բարձր արժեքներ տվող մի շարք դպրոցներ՝ Տաթև, Հաղբատ և ուրիշները։ Հավակնություն չունենալով մեր ներկա կուրսում մշակել մանրանկարչության դպրոցների հարցն ընդհանրապես, վորովհետեւ դա մասնագիտական այլ հարց ե և հայկական մանրանկարչությամբ զբաղվող մասնագիտներին ե վերաբերում, սակայն այնքան, վորքան ձեռագրի բնութագրման համար անհրաժեշտ ե նախնական ծանոթություն տալ հայկական մանրանկարչության վերաբերյալ, մենք անհրաժեշտ ենք համարում շատ կարճ կանգ առնել հայկական մանրանկարչության մի քանի դպրոցների վրա։

Հայկական ձեռագրերում մեզ հասած ամենահին մանրանկարչական նմուշը—մեր մատենադարանի կրկնագիր մաշտոցի մեջ մի յերեսի վրա մնացած խորանն ե։ Զեռագիրը լվացվել ե XIII դարում վոմ Հովհաննեսի կողմից և հետո գրվել մաշտոցի տեքստը։ Զեռագրի նախնական տեքստը գրված ե յեղել, մեր կարծիքով, VIII դարից առաջ։ Այդ նույն ժամանակին ե վերաբերում նաև մանրանկարչական մեծ արժեք ներկայացնող խորանը։ Այդ նույն խորանի նկարչության շկոլային են պատկանում նաև մեր մատենադարանի թիվ 275 ձեռագրի զարդանկարները, վորոնք նկարված են 1071 թվին։

Մանրանկարչական այս շկոլային հատուկ են—մյուս գույշների համեմատությամբ, կապույտ և կանաչ գույների գործածության գերակշռությունը՝ Երար հետևող մի շաբթ կիսախորանների նկարումը, խաչի, ինչպես և քրիստոնեական այլ զարդարությունների բացարձակ բացակայությունը, խորանների միջև առանձին շրջանակներում գիշատիչ կենդանիների (առյուծ, բազե, արծիվ և այլն) նկարումը, վարդերի փոռնչերով խորանների զարդարումը և այլն։

Հնագույն հայկական մանրանկարչության նմուշներ են հանգիսանում նաև մեր մատենադարանի «վղոսկրի» կոչվող ավետարանի (998 թվից) և Վենետիկի Միիթարյանների մատենադարանի «Մլքէ թագուհու» ավետարանի (909 թվից) մանրանկարչությունը։ Այս ձեռագրերի մանրանկարչությունը, կրկնագիր մաշտոցի մանրանկարչության համեմատությամբ, միանգամայն այլ դպրոցի պատկանող գործ ե։ Այստեղ արգեն վորոշ ազգեցություն ունի բյուզանդական քրիստոնեական մանրանկարչությունը։ Այս շկոլայի մանրանկարչությանը հատուկ են նկարների շքեղություն, մանրանկարչական

մանրամասնություններ, պայծառ գույներով սյունազարդ խորանների նկարում, տիպերի ճիշտ արտահայտում, հագուստների ծալքերի վարպետ նկարում և այլն:

Հայկական մանրանկարչությունը մեծ չափով զարգանում և ծաղկում է Կիլիկյան դպրոցում: Այստեղ արդեն հանդես են գալիս մի շարք տաղանդավոր նկարիչներ (Ռոսլին, Սարգսի Պիծակ և ուրիշները), վորոնք խոշոր գործ են կատարում հայկական մանրանկարչության զարգացման գործում: Կարեոր և նշել, վորայս դպրոցի ստեղծագործության լավագույն մի շարք նմուշներ հասել են մեզ և այժմ մենք հնարավորություն ունենք տալ կոնկրետ այդ դպրոցի մանրանկարչության համապատասխան արժեքավորումը:


Կիլիկյան դպրոցի մանրանկարչությունը, ինչպես ասել ենք արդեն, սխալ ե «արքունական-ակադեմիական» համարելը: Այդ դպրոցի մանրանկարչություն ստեղծագործողը վոչ թե արքունիքում նստողներից ե, այլ ցածր խավի նկարիչներից, վորն աշխատել ե առաջինների պատվերով:

Կիլիկյան դպրոցի մանրանկարչությանը, ամենից առաջ, հատուկ ե նկարչական բարդ կոմպոզիցիա: Նկարում են որինակ վոչ միայն մարդկանց, իրենց գրասեղանի տուած, ինչպես հայկական մի շարք այլ դպրոցներումն ե, այլև տալիս են այդ մարդու հեռու շրջապատը—վանքեր, պալատներ և այլն: Կիլիկյան մանրանկարչության մեջ մեծ չափով գործ են ածում վոսկի: Յերեխն ամբողջ նկարի շրջանակի ազատ յեղած ֆոնը զարգարում են վոսկով: Մարդկանց գեմքերին տալիս են նրանց նոգեկան ապրումները: Ահա ձեզ մի գրիչ, վորը ձեռքը ճակատին գրած նայում ե ճեղուն և մտածում, տիրությունը նրա գեմքից յերեւում ե: Լուսանցագարդությունների մեջ սկսում են գործ ածել թաշնագրեր, ծաղկագրեր, գաղանազրեր, և այլն: Այս շկոլան հայկական մանրանկարչության մեջ գերիշխող և հանդիսանում XII—XIII դարերում:

Մեր մանրանկարչական կարեվոր դպրոցներից և Տարեվր:— Մանրանկարչական այս դպրոցը զարգանում է հատկապես XIV—XV դարերում: Նրա բնորոշ հատկանիշներից ե — խոտածած, հաստ շորիփներով նկարչությունը: Մի քանի գծերով հաջողվում է նրանց, որինակ, տալ ալեզարդ ծերունու գիմագիծը, Յերեք-չորս գծով շատ հաջող ձեռվում ե գլխարկը և այն: Խորանների


վերեկից շատ են զարդարում թոշուններով—աքաղաղներ, կաքավներ, սիրամարգներ և այլն:

Հայկական մանրանկարչության լավագույն և որբգինալ զըպւրոցներից և Խիզանը: Գույների մեջ գերակշռում ե բաց կարմիք գույնը: Կատարվում են շատ բարդ կոմպոզիցիաներ: Մարդիկ, կենդանիները նկարվում են վոչ թե սառած դրությամբ, այլ վորոշ գործողության մեջ: Ահա ձեզ յերկու աքաղաղ խորանի վրա, վորոնք պատրաստվում են կովելու: մի այլ տեղ արագիլ կանգնած ե մի վոաքի վրա՝ բերնում բռնած ոձ. յեղջերուն նկատել ե



Նկ. 26.-ա.—Հայկական մանրանկարչության նմուշ: Են գործադրվում կծիւկի նման իրար փաթաթված զարդարանքներ: Գերակշռում ե նաև տերեաձեվ զարդարանքը: Այս շկոլայի ծաղկման շրջանը—XIII—XIV դարերն են:

Յեվ, վերջապես,
Զուղայի օկոլան:—Այս շկոլան սկզբում զարդարում ե Հին Զուղայում, Նախիջևանում, իսկ Շահաբասի գաղթեցումից հետո շարունակում ե իր զարդացումը Պարսկաստանում: Ճիշտ Զուղայի որինակով ձեռագրեր են սկսվում գրվել ու նկարվել նաև Պոլսում և այլ վայրերում: Զուղայի շկոլայի մասնակարչությանը հատուկ է նկարչության անչափ շքեղությունը:



Նկ. 26.-բ.—Հայկական մանրանկարչության նմուշ:

վոսկով և վառվառուն այլ գույններով: Նկարներ ու զարդարություններ կարելի յե հանդիպել ձեռագրի գրեթե ամեն մի եջի վրա: Կարեոր և շեշտել այն հանգամանքը, վոր այս շկոլայի, ինչպես և հայկական մյուս բոլոր շկոլաների, ամենագրական կողմն այն ե, վոր նրանք թեկուղ հաղար, յերկու հաղար ել նկար նկարելիս լինեն մի ձեռագրում, յերեք չեն կրկնում մյուս եջում նկարածը: Զուղայի շկոլան ունի սակայն մի թերություն: Նրա մեջ քիչ և որիգինալությունը: Այս մանրանկարչության հիմքը հանդիսանում է Կիլիկյան, Խիզանի մանրանկարչությունը: Ոդտվել են նաև յերկոպական մանրանկարչություններ: Այս շկոլայի ծաղկման շրջանն ե XVII-XVIII դարերը:

Սրանով չե վերջանում հայկական մանրանկարչության առանձին շկոլաների թվարկումը: Մանրանկարչական բարձր արժեքի ձեռագրեր են հասել մեզ Բաղեշից, Սանահինից, Կաֆայից և հայկական գրչության այլ կենտրոններից: սակայն այս վորջ հարստությունը, ինչպես ասել ենք արդեն, մասնագիտական ուսումնասիրության դեռ չի յենթարկված:

14. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵԿ ԱՂԱՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Հայկական ձեռագրերում կատարված փոփոխությունների և աղավաղումների յերեք հիմնական տեսակը կարելի յե նշել—ընդումիջարկություններ (ինտերպոլեացիա), հապավումներ և գրչական սխաններ: Նախնական տեքստերի մեծ մասի աղավաղման պատճառը, ինչպես պարզվում ե, ընդորինակող գրչի անուշադրության և կամ թե չե՝ ուշ շրջանում նպատակադրված ձեռվ կատարված խմբագրության հետևանքով ե:

ա) Ընդմիջարկություն:— Ընդմիջարկություն կամ ինտերպոլացիա յեն կոչվում նախնական տեքստում ընդորինակող գրիչների կատարած այն լրացումները կամ մեկնությունները, վորոնք արտադրվում են նախնական տեքստի հետ և ներկայացվում են վորպես նրա որգանական մասը: Միջին դարերում հաճախ և պատահում, յերբ վորեւ մեկն անհրաժեշտ ե համարել իբրունեցած ձեռագրում նախկին աշխարհագրական անունները մեկնել իր ժամանակի գործածական անուններով և կամ թե չե՝ նախկին հատվածի այս կամ այն մասը թերի համարելով՝ կատարում ե, իբ կարծիքով անհրաժեշտ լրացումներ ու այլ տիպի ուղղումներ: Այդ բոլոր դեպքում եր պարզ ե, վոր տվյալ աշխատումներ:

թյունը փոփոխվում, աղավաղվում ե, վորովհետև նա հեռանում
ե իր նախական ընագրից:

Ընդմիջարկություններն ամենից շատ են հանդիպում մեզ
պատմա-գիտական գրականության մեջ: Նրանք շատ քիչ են կրո-
նական-կանոնական գրականության մեջ: Վերջինիս մեջ փոփո-
խություններ և կամ լրացումներ կատարելը համարվել ե ան-
թույլատրելի մի գործ: Ընդմիջարկությունով ամենից շատ աղա-
վաղված տեքստերը—տարեգրություններն են և աշխարհագրու-
թյունները: Պարզվում ե, որինակ՝ վոր Մամվել Անեցու անունով
հրատարակված ժամանակագրության տեքստի ավելի քան կես
մասն իրեն՝ հեղինակինը չի, այլ ուշ շրջանի գրիչների կողմից
ավելացված գործ ե: Այդ յերեսում ե իրեն՝ Անեցու կենդանու-
թյան ժամանակ (1176 թ.) ընդորինակված իրեն ժամանակագրու-
թյունից, զորք բարեխախտաբար, պահպանվել ե մեր մատենա-
դարանում: Այդ ձեռագրի՝ հրատարակած տեքստի հետ կատա-
րած համեմատության հիման վրա, այժմ հնարավոր ե նշել այն
ըոլոր հատվածները, զորոնք ուշ շրջանում են ավելացված, ըստ
վորում, պարզվում ե, վոր այդ ավելացումները վոչ թե մի, այլ
մի շարք գրիչների գործեր են:

Ուշ միջնադարյան հայ մատենադիրների տեքստերում յեղած
ընդմիջարկությունները համեմատաբար հեշտ և ճանաչել, վորով-
հետև նրանք մեզ հասել են հնագույն ընդորինակություններով
կամ ինքնազրերով, բայց դժվար ե հին հայկական մատենադիր-
ների աշխատություններում յեղած ընդմիջարկությունների ճանա-
չելու հարցը, վորովհետև նրանք մեզ հասել են ուշ շրջանի ար-
տագրություններով: Յերենման նման ընդմիջարկությունները վըճ-
ական նշանակություն ունեն այս կամ այն տեքստի հեղինակը
պարզելու խնդրում: Վորպես որինակ՝ կարելի յե բերել այստեղ
Խորենացուն վերնագրվող «Աշխարհացոյց»-ի տեքստը: Ուշ շրջա-
նի ընդորինակողներն այդ տեքստում ավելացրել են մի շարք աշ-
խարհագրականնոր անուններ («Ղոբմ», «Յօզպ սուսաց», «Շրուան»
և այլն), զորոնք թյուրիմացաբար կովան են դարձել վորոշ ա-
նուշադիր բանասերներ՝ Խորենացուն վերնագրվող «Աշխարհա-
ցոյց»-ի հեղինակի ժամանակը վորոշելու գործում: Տեքստի վեր-
լուծման հիման վրա անպայման հնարավոր ե պարզել նրա գրվե-
լու ժամանակը, բայց այդ գիտական և հիմնավոր կարող ե լինել
այն դեպքում միայն, յերբ նախքան տեքստի վերլուծումը փորձ
կարվի աղատել տեքստն ընդմիջարկություններից:

բ) Հապավում:—Հին հայկական ձեռագրերում բազմաթիվ
են նույնպես այս կամ այն հին մատենագրերից առանձին հատ-
վածների հապավման դեպքեր: Դրա պատճառը հիմնականում յեր-
կու յե—մեկ, վոր նյութի պակասությունը հնարավորություն չի
տալիս ընդորինակել տվյալ մատենագրի վողջ աշխատությունը և
ընդորինակող գրիչը նպատակահարմար և համարում իր կարծի-
քով ավելորդ, յերկրորդական արժեք ունեցող մասերը կրճատել,
իսկ մյուսը—յերբ տվյալ աշխատության առանձին հատվածները,
յերբեմն անգամ գլուխներ խորթ են համարվում տվյալ ժամանա-
կաշրջանի իրավական նորմաներին և պահանջվում են նրանց հա-
մար խորթ համարված մասերը դուրս հանել: Առաջին դեպքի
համար կարելի յե մատնացույց անել Սոկրատի պատմությունը
և «Աշխարհացոյց»-ը, վորոնք մեղ հասել են յերկու խմբագրու-
թյուններով—համառոտ և ընդարձակ, իսկ յերկրորդ դեպքի հա-
մար—Շիրակացու «Տիեզերագիտության» տեքստը: Վերջինից,
ինչպես պարզվում է մեր մատենադարանի մի ձեռագրում պահ-
ված «Տիեզերագիտության» նախնական տեքստի ընդորինակու-
թյունից, կրճատվել ե մոտ 23 տեղում: Կրճատված են գլխավորա-
պես այն տեղերը, վորոնք համարվել են հակաքը իստոննեական: Կարելի յե բերել մի որինակ՝

«Արդ ահա հասաք ի կէտն ոչ
դուզնաքեայ, այլ ի մեծն և յա-
հագին յերկինն վերին, որում
Յոյնք եթեր կարդացին, և Քաղ-
դէացիք հուր թաղկեալ ասա-
ցին, որում և բազումք յեկե-
ղեցւոյ հաւանեցան: Թէպէտ և
չարաց փիլիսոփայիցն ոչ թուե-
ցաւ հաճոյ, բայց մեղ աւելորդ
է զնոցոցն ձառել լքեալ թող-
ցուք դիսուտեալմն...»:

Անանիայի Շիրակունոյ Մնա-
ցորդք բանից, Հրատ. Ք. Պատ-
կանյանի, «Յաղագս երկնի»
գլուխը (եջ 35):

«Արդ՝ ահա հասաք ի կէտն
ոչ ի դուզնոքեա, այլ ի մեծ և
ահագին երկինն վերին, որում
յոյնք եթերն կարդացին և հել-
լինացիք հուր թաղկալ ասացին,
զորս և բազումք յեկեղեցոյ հա-
ւանեցան: Թէպէտ և չարաց փի-
լիսոփացն ոչ թուեցաւ հաճոյ
[քանզի կէսքնի նոցանէ երկինս
բազումս և աշխարհս անհամարս
ասացին. և կէսք ի նոցանէ ի
մի տարը երկնի զերկինս ամե-
նայն ձուկեալ ասացին. և զնիւ-
թոյն ասացին՝ եթէ է այլ իմն
բնութիւն պարզ, աւտար ի չո-
րից բնութեանց, զի ոչ հուր է
և ոչ աւդ, ոչ ող և ոչ ջուր,

այլ այլ իմն է, ասեն լուսաւոր և
խիստ որպէս զբնութիւն պաղ-
պաղակի և կամ որպէս զվանակն
է ասին՝ եթէ ի ջրոց նչ
պաղեալ խստանան՝ մեծաւ հաս-
տատուն կցուածով առնու գալ ի
կերպարանս ականց պատուա-
կանաց. և ասեն եթէ վանակն
պայծառ լուսաւորութեան աւ-
դոյ և ջրոյ, յորոց առնուն նո-
րա զաւըինակն նիւթոյ հաստա-
տութեանն: Բայց ինձ արդարեւ
ծաղու և եպերանաց արժանի
թուին, որք զանձինս առ իմաս-
տունս ունէին և յիմարեցան:
Որք զերկին և զերկիր անսկիզբն
և անկատար ասացին, որպէս ոք
զի տեսանիցէ զիր բոլորակ
զըռշմեալ յումէ և իցէ. և վասն
զի ոչ եր ինքն ի տեղն, յոր-
ժամ հանաւ գիրն բոլորակ. և
չերկի թէ ուստի իցէ սկսեալ և
կարծիցէ թէ անսկիզբն է: Բայց
պարտ է նկատել մտաւք, եթէ
որ էհան զնա, անզըն արար
նման սկիզբն և նոյն բովանդա-
կեաց զնա կատարմամբ]: Եւ
արդ՝ աւելորդ է մեզ վասն նո-
ցա յերկրաբաներ լքեալ թող-
ցուքզ խոտեալսն...»:

Մեր մատենադարանի թիվ
2180 ձեռագիր, թերթ 481 թ.:

Զակերտավոր փակագծի մեջ յեղած ամբողջ հատվածը, ինչ-
պես տեսնում ենք, Շերտակացու աեքստից կրծատվել ե: Այն ժա-
մանակ, յերբ քրիստոնեական յեկեղեցին Հայաստանում ևս ստեղ-
ծում ե իր անշարժ կրօնական գոգմաները, նա այդ տեսանկյու-
նով վերանայում է հրապարակի վրա յեղած բոլոր տեսակ զրաւ-

կանությունը։ Վորոշ աշխատություններ նա անհրաժեշտ եւ համարում ամրողապես դուրս հանել, վորոշ աշխատություններից նա կը ճանապարհ է և վորոշ աշխատություններ հիմնովին խմբագրուման յենթարկում։ Շիրակացու աշխատությունները ևս յենթարկվել են այդպիսի վերանայման։

Անհրաժեշտ և նշել, վոր մեղ հասել են հակաքը եստոնեական համարված վորոշ գրականության ցուցակներ։ Այդպես՝ մեր մատենադարսնի թիվ 1869 ձեռագրում, վորն ընդորինակված է Անդրեաս գրչի կողմից 1585 թվականին, բերված և հետեւյալ ցուցակը։

Այս են անուանք .ԺԶ. սուս գրոցն, որ եկեալ(են) է հերձուածող ասորոցն և ոչ ի յուղղափառ ասորոցն. իմանայք՝ որ է այս՝ Աղամայ կտակն, ծփոն աւրհնութեան, Փիփիեանն, Գորտոսակն, Կիրակոսակն, Ղոսիմուն, Պետրոսի տեսին, Դիաթեկն, Աստուածածնին պատմութիւն, Սեբոսն (ընդգծում իմն եւ—Ա. Ա.), Փիւրհոնացիքն, Մանկութիւն տեսան, Ղուսավորչին տեսիլքն, զԱնթագգելի մատենան, Գրիգորի և Բարսեղի հարցմունքն, զՄանեայ մեկնութիւն (ն) աւետարանի։ Եւ որ հաւատայ նոցայ նզովի։

գ) Գրչական աղավագումներ։— Այս տիպի աղավագումների պատճառը գլխավորապես ընդորինակվող տեքստի վատ ընթերցման և կամ թե չե չե ընդորինակող գրչի անփութության հետևանքով ե։ Հին հայկական տեքստերը, ինչպես ասել ենք արդեն, բառանջատում չունեն, և, բացի այդ, պատահում ե, վոր ձեռագիրը ջրի մեջ ընկնելով, կամ արևի տակ յերկար մնալով գծվար ընթեռնելի յեն դառնում։ Նման տեքստերն ընդորինակող գրիչը, պարզ ե, վոր պիտի թույլ տա և տալիս ե, գրչական վորոշ սխալներ։ Տեքստերում յեղած նման սխալները վերջ տալու համար ընդունված ե կազմել մատենագրերի գիտական, համեմատական տեքստը՝ տեքստից ներքեւ բերելով այն բոլոր տարբեր ընթեռցումները, վորոնք նկատվում են տարբեր ձեռագրերում։ Աղավագումների այս տեսակն ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի որինակներ՝

«...ոմանք ասացեն զդմանէ»
(այսինքն՝ «յաղագս կաթին» ծրոյց—Ա. Ա.) թէ ճանապարհ հետ...»։ | Պիտի լինի «...ոմանք ասացին զդմանէ թէ՝ ճանապարհ է է հին, արեգական հետք»։
«յաղագս կաթին» ծրոյց (Պատկ. հրատ. ել 48):

«...ամեք՝ թէ ամենայն
դգայութիւնքս վերինք և ներ-
քինք ունին խառնուած միա-
բանութեան առ իրեարս»:
(Պատկ. հրատ., եջ 48):

«...ասեմք՝ թէ ամենայն գա-
լացութիւնք վերինք և ներքինք
խառնուած միաբանութեան ու-
նին առ իրեարս»:

ՅԵՐԿԱՐԳԻՐ	ԲՈԼՈՐԳԻՐ	ՆՈՎԻՐ
Մ - Մ	Ղ - Ղ	Ա - Ա
Դ - Դ	Ի - Ի	Բ - Բ
Յ - Յ	Ը - Ը	Զ - Զ
Ւ - Ւ	ԱՅ - ԱՅ	Շ - Շ
Չ - Չ	Է - Է	Ճ - Ճ
	ԱՆ - ԱՆ	Ա - Ա
	Վ - Վ	Ժ - Ժ
Է - Է	Թ - Թ	ԻՒ - ԻՒ
Ը - Ը	Չ - Չ	Ղ - Ղ
Ջ - Ջ	Ա - Ա	Հ - Հ
Ո - Ո	Հ - Հ	Ե - Ե
Ք - Ք	Ճ - Ճ	Ն - Ն
	(Ժ ԿՐԱՆ)	

Նկ. 27.

Ըստորինակող գրիչները սխալ են կարդում իրենց արտա-
գրած այս կամ այն տեքստը. Նրանց կատարած սխալը մտնում է

ձեռագրի մեջ և նրա որդանական մաս դառնալու քաղաքացիություն և ձեռք բերում։ Գրիչների բաց թողած ահա այս սխալները շատ հաճախ հիմք են դառնում վորոշ ուսումնասիրողների մոտ՝ սխալ յեղակացություններ հանելու։ Գրչական այս աղավաղումներից աղատվելու համար հայկական մատենագրերից մի քանիսը հրատարակվել է ձեռագրական համեմատություններով (Ագաթանգեղոս, Խորենացի)։ Սակայն սա դեռ հայկական աղբյուրների գիտական հրատարակության սկիզբն և միայն։ Դեռ մեր մյուս աղբյուրները սպասում են հերթի։ Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար անհրաժեշտություն և ոգտագործել սկզբնաղբյուրները։

Բացի նշված աղավաղումներից, պատահում են ձեռագրերում թերթերի հետևառաջությունից կամ պակասած թերթերի հետևանքով առաջացած աղավաղումներ։ Նախնական ձեռագրում թերթերը խառնվում են, կամ թերթերից ընկնում են, իսկ ընդուրինակող գրիչն անուշադրությամբ ձեռագրում յեղած թերթերի հետևողականությամբ արտագրում ե, չի նշում պակաս թերթերը, վորի պատճառով հետագայում տեքստը աղճատման և յենթարկվում։ Ուսումնասիրելիս՝ անհրաժեշտ և սկզբնաղբյուրների ամբողջականության վրա լուրջ ուշագրություն դարձնել։

15. ԶԵՐԱԳՐԻ ՍԻԳՆԱՏՈՒՐԱՅԻ ԼՐԱՑՈՒՄԸ

Ձեռագրի ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր մասնագետ պարտավոր և տալ իր ոգտագործած ձեռագրի նկարագրությունը, կամ ինչպես ընդունված ե ասել, լրացնել ձեռագրի սիզնատուրան։ Ձեռագրերի սիզնատուրան լրացվում և յերկու ձեռք—համառոտ և ընդարձակ։

Ձեռագրի համառոտ նկարագրության ժամանակ նշվում են՝ ձեռագրի համարը, բովանդակությունը, գրիչը, գրչության վայրը, թվականը և գրությունը։

Ձեռագրի ընդարձակ նկարագրության ժամանակ ուսումնասիրողը պարտավոր է մանրամասն պատասխանել հետեւյալ հարցերին։

1) Ձեռագրի համարը— Նշվում է վոչ միայն ձեռագրի ներկա նոր համարը, այլև հինը, յեթե ինարկե այդպիսի համար ձեռագրին առաջներում ունեցել է։

2. Աերեագրիքը— Գրվում է ձեռագրում յեղած տվյալ աշխա-

տության վերնագիրը: Յեթե ձեռագրի մեջ մտնում են մի քանի նյութեր, այն դեպքում ձեռագիրը համարվում է ժողովածու և տրվում ե նրա մեջ յեղած նյութերի բովանդակությունը (որինակ՝ 1-ա—13-ա—ժամանակագրութիւն Սամուելի Անեցւոյ, 18-ը—24-ա—Պատմութիւն Կիրակոսի Գանձակեցւոյ, 24-ը—72-ա—Արքատուելի Պերի Արմենիաս):

3) Թերեւր:— Ձեռագրերը համարակալվում են սովորաբար վոչ թե եջերով, այլ թերթերով: Նկարագրության ժամանակ պիտի տալ թերթերի ընդհանուր քանակը: Վորեւե կապակցությամբ թերթերի առանձին յերեսը ցույց տալու դեպքում՝ առաջին յերեսի համար գրվում ե «ա» (կամ լատինական ա), իսկ մյուս յերեսի համար—«ը» (լատինական Վ) տառերը: Այսպես՝ 64-ա (=64-րդ թերթի առաջին յերեսը), 64-ը (=64-րդ թերթի շուրջ տված յերեսը):

4. Պրակները:— Հնում ձեռագրերը գրվել են վոչ թե կազմված գրքերով, այլ պրակներով, վոր հետո միացվել և կազմվել են՝ հաշվելով տվյալ կազմի մեջ յեղած պրակների քանակը: Անհրաժեշտ ե նշել ահա այդ պրակների քանակը:

5. Մեծությունը:— Նշվում ե ձեռագրի լայնությունը, յերկարությունը և հաստությունը՝ սահմանեած մերժությունը:

6. Նյութը:— Հայկական ձեռագրերի հիմնական նյութը թուղթ ե կամ մագաղաթ, ըստ վորում, նշվում ե գրանց գույնը:— յենթադրենք՝ դեղին գույնի մագաղաթ, կապտագույն թուղթ և այլն:

7. Կազմը:— Նշվում ե կազմը ինչ նյութից լինելը,—կաշեպատ տախտակ ե, կարտոն ե, հասարակ հաստ թուղթ ե և այլն: Յեթե կազմին կպցըրած ե լինում կտոր՝ նշվում ենակ այդ մասին:

8. Պահպանակ:— Պահպանակ կոչվում են ձեռագրի այն թերթերը, վորոնք գրվում են կազմի մեջ՝ ձեռագրի տեքստը պաշտպանելու համար: Ձեռագրերի մեծ մասի մեջ վորպես պահպանակ գործ են ածված հին ձեռագրերի կտորներ: Յեթե պահպանակի վրա կան գրեր, պիտի աշխատել պարզել նշանց բովանդակությունը և նշել սիդնատուրայում:

9. Ձեռագրի վիճակը:— Պիտի նշել՝ ձեռագրը բավարար վիճակում ե, վսասված ե, քայքայված ե: Յեթե վսասված ե՝ պիտի նշել վսասվածքի չափը և այն մասին թե ձեռագրի վոր մասումն և վսասվածքը:

10. Կրուրյունը:— Կարճ նշվում ե՝ միասյուն ե, յերկայուն, թե յեռասյուն ե: Վերջինս հաղվադեպ և հայկական ձեռագրերում:

11. Գառարկ բորեր:— Յեթե կան ձեռագրերում դատարկ թղթեր՝ նշվում են նրանց համարները:

12. Տողերը:— Քանի տող և գտնվում ձեռագրի մի եջում, Յեթե եջերում նկատվում են տողերի քանակի տարրերություններ, վերցվում են նրանց միջին թիվը:

13. Գծումներ:— Յեթե գծումը մնշումով եւ նշվում և այդ մասին քարտում:

14. Բառանձառում:— Ձեռագրերի տեքստում բառանջատում կատարված եւ, թե վոչ: Պիտի կարճ պատասխանել «այս» կամ «վոչ»

15. Գիրք:— Ձեռագիրն ինչ գրով և գրված—մեսրոպյան յերկաթագիր եւ, միջին մեսրոպյան գիր եւ, բոլորգիր եւ, թե նոտր եւ:

16. Զարդարություն:— Այստեղ անհրաժեշտ և տալ ծանոթություն ձեռագրի մանրանկարչական արժեքի մասին—ինչ գույնի թանաքով են գրված վերնագրերը և ինչպիսի զարդարքերով (թռչնագրեր, ծաղկագրեր), կան արդյոք խորաններ և կիսախորաններ և ինչ մանրանկարչական արժեք են ներկայացնում, ինչ շկոլայի յեն վերաբերում և այլն:

17. Գրիչը:— Ով և գրել տվյալ ձեռագիրը: Յեթե ձեռագրի գրիչները մի քանի հոգի յեն, պիտի հիշել բոլորի անունները: Յեթե ձեռագիրն ինքնագիր եւ, այսինքն՝ գրված և աշխատության հեղինակի կողմից, հիշվում և այդ մասին:

18. Ծաղկող:— Խոսքը ձեռագրի նկարչի մասին և Յերեեմ՝ ձեռագրի գրիչը հանդիսանում են նաև ծաղկողը, վորի մասին պիտի հիշել: Պատահում են դիպքեր, յերբ ձեռագիրը գրելուց մի քանի դար հետո յեն տալիս ձեռագիրը ծաղկելու (զարդանկարելու), ուստի և անհրաժեշտ են նշել ձեռագրի ծաղկելու ժամանակը:

19. Կազմողը:— Յեթե հիշատակարանից հնարավոր և գառնում պարզել ձեռագրի կաղմելու ժամանակը, պիտի նշել այդ մասին:

20. Նորոգողը:— Ձեռագրի նորոգողները սովորաբար թողնում են իրենց հիշատակագրությունները, վորոնցից պիտի պարզել և նշել նորոգողի անունը և ժամանակը:


21. Սացողը:— Ձեռագրերի մեծ մասը գրել են առանձին մարդկանց պատվերներով, վորոնք պահանջել են գրիչներից հիշել իրենց անունները ձեռագրի հիշատակարանում:

22. Ժամանակը:— Նշվում և այն ժամանակը, վորը տալիս և ձեռագրի ընդորինակող գրիչը: Փակագծում պետք ետալ նաև մեր ներկա թվականը: Յեթե ձեռագիրը գրել և մի քանի տարվա ընթացքում պիտի նշել այդ տեղությունը:

23. ՏԵՂԲ:— Գրչության վայրը նշելիս՝ պիտի հիշել թե վհր
արջանի, վհր քաղաքում կամ գյուղում և գրվել:

24. Հիշատակարան յեվ հիշատակագրաւրյուն:— Նշվում և ձեռ-
ուագրի այն եղերի համարը, ուր գտնվում է գրչի հիշատակարանը
կամ ուշ շրջանում ձեռագրի եղերի վրա արգած հիշատակագրու-
թյունները: Ձեռագրի ավելի ընդարձակ բնութագրման ժամանակ
արտագրվում են նաև հիշատակարանները և հիշատակագրու-
թյունները:

25. Ծանօթություններ յեվ տեղնկություններ:— Այստեղ գլխա-
վորապես տրվում ե տվյալ ձեռագրի համառոտ պատմությունը—
մինչև մատենադարանի ձեռագրերի ժողովածույթի մեջ մտնելը
ինչ ինչ մարդկանց մոտ և գտնվել, վոր ժամանակներում, նա բա-
նասիրության մեջ հայտնի յե թե վոչ և յեթե հայտնի յե ինչ
չափով, ինչ կապակցությամբ և այլն:



ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Акад. Н. Я. Марр, Новые археологические данные о постройках типа Ереруйской базилики (З. В. О. XIX).
2. Его же, Надгробный камень из Семиречия (З. В. О. VIII).
3. Акад. В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918 г., стр. 44—50.
4. Акад. И. А. Орбели, Багаванская надпись (см. „Христ. Восток“ т. II, стр. 138—142).
5. Հ. Տաղեան, Ակնարկ մը հայ հնագութեան վրայ, Վիեննա, 1898:
6. Պրոֆ. Հ. Աճառյան, Հայկական գիրը՝
7. Իսահակ Յարութիւնեանց, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892թ. (յիշկըորդ մասը):
8. Գ. Զարբեանալիեան, Հայկական հին գպրութիւն, Վենետիկ, 1886
(«Հայ գրչագիրք» գլուխը):
9. Проф. Шанидзе и И. Абуладзе, О новораскрытом албанском алфавите, Тбилиси, 1898 г.
10. N. Karamiantz, Verzeichniss der arm. His, etc., Венеция, 1888.
11. Կ. Ղափաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Յերեւան, 1939 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• Եջ

Ներածություն	3
1. Նախամեսարույցան գրականության հաբցը	6
2. Հայկական գրության հնագույն սմուշները	12
3. Հայ գրիչները	18
4. Հայկական գրերի տեսակավորումը	24
5. Յերկաթագիրը և նրա բնորոշ հատկանիշները	26
6. Բոլորգիրը	33
7. Նոտրգիրը և շղագիրը	34
8. Համառատագրությունները	36
9. Գրադաֆարագրերը	38
10. Ծածկագրության հիմնական տեսակները	42
11. Թվերի գործածությունը հայկական գրականության մեջ	49
12. Կետաղբությունը հայկական ձեռագրերուն	52
13. Մանրանկարչությունը	55
14. Փոփոխությունները և աղավաղութները հայկական ձեռագրերի նախնական տեքստակրում	59
15. Զեռագրի սիզնատուրայի լրացումը	65
16. Գրականության ցանկը	69


Պատ. խմբագիր՝ Ար. Հարեյան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարության
Արքազըն՝ Մ. Հանագարյան
Կոնտրոլ պրազրի Ա. Բարսյան
Գլավիտի լիազոր Ե. 1131, պատ. 267, տիրաժ 1000
Պետհամալսարանի Հրատարակության տպարան, Յերևան, Աբովյան 104.

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0012944

ԳՐԱՎ ՅԱԳԻՐԵԼ 304.



13189

Պատ.